23 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2016 ՈՒՐԲԱԹ 35(5435)

Ազգ Azg

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651

# Հայաստանի դեմ՝ Բաքուն Իսլամական կազմակերպության հետ ճակատ է ստեղծում

Սեպտեմբերի 20- ին ՄԱԿ- ի 71- րդ նստաշրջանի շրջանակներում Իսլամական համագործակցություն կազմակերպության գլխավոր քարտուղար Իադ բիլ Ամին Մադանիի նախագահությամբ առաջին նիստն է գումարել հիշյալ կազմակերպության ներսում ստեղծված 7 պետություն ներառող շփման խումբը, որի օրակարգի հարցը «Ադրբեջանի դեմ Հայաստանի ագրեսիան» է, իրազեկ ենք դառնում «Ազերթաջ»- ի տեղեկատվությունից: Շփման խմբի անդամ երկրների՝ Թուրքիայի, Մարոկկոյի, Սաուդյան Արաբիայի, Պակիստանի, Մալայզիայի, Գամբիայի եւ Ջիբութիի ներկայացուցիչների առջեւ ելույթ է ունեցել Ադրբեջանի արտգործնախարար Մամեդյարովը՝ ներկայացնելով ԼՂ հայ-ադրբեջանական հակամարտության պատմությունը, ատրիյան դեպքերը՝ հույս հայտնելով, թե իրենց միացյալ ջանքերը պիտի հարկադրեն Հայաստանին կատարելու ՄԱԿ- ի Անվ բանաձեւերը:

Ան. Հ. Գերմանիա

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Նոր դեմքերը կփոխե՞ն իրավիճակը

Մինչեւ շաբաթավերջ, ինչպես օրենքն է պահանջում, ամբողջությամբ կազմված կլինի վարչապետ Կարեն Կարապետյանի կառավարությունը՝ կառուցվածքային բոլոր փոփոխություններով հանդերձ, որից հետո միայն կարելի կլինի ըստ էության կարծիք կազմել նրա՝ այսպես կոչված տեսակարար կշռի մասին:

Մինչեւ հոկտեմբերի 2-րդ կես, այսինքն 20 օր հետո, ինչպես օրենքն է պահանջում, պատրաստ կլինի նաեւ նոր կառավարության ծրագիրը՝ Ազգային ժողովին ի գիտություն ներկայացվելու համար: Եվ այնուհետեւ միայն կարելի կլինի ըստ էության կարծիք հայտնել նոր կառավարության ստանձնելիք առաքելության մասին:

Սակայն մինչ այդ, քաղաքացիներս իրավունք ունենք, գոնե տպավորությունների մակարդակով, կարծիք ու տեսակետ հայտնելու, սխալվելու իրավունքն էլ միշտ վերապահելով մեզ:

Առաջին տպավորությամբ, խոսելով կառավարության նոր, ավելի շուտ՝ թարմացված կազմի մասին, ուշագրավ է նրա միջին տարիքի երիտասարդացումը, «կոշտացման» բավական երկար ժամանակ զբաղեցրած որոշ նախորդների հեռացմամբ, ինչը դրական է ըստ ամենայնի: «Բաց ուղեղ», համապատասխան կրթություն եւ որոշակի փորձ ունեցող մեր կադրերի քանակը, հանրապետությունում թե դրսում, այժմ արդեն բավական լուրջ թիվ է կազմում՝ հրապարակը վավերական կամ անվավեր «ֆիդայիների» տնօրինությունից ազատելու համար, պայմանով որ նույն՝ թարմացման մոտեցումը հանդես բերվի նախարարների տեղակալների ընտրության հարցում նաեւ:

Երկրորդ, ինչպես ներսի էջերում նշել է մեր աշխատակիցը, կառավարության կազմի նոր անդամների մեջ քիչ չեն տեխնոկրատները, որոնք, հասկապես ներկա պայմաններում, պետք է փոխարինեն ավատապետական սկզբունքներով շարժվողներին, որոնք խիստ շատ են մեր երկրում՝ գյուղական համայնքներից մինչեւ մեծ ու փոքր քաղաքներ եւ ողջ հանրապետություն:

Երրորդ՝ նոր վարչապետը, դատելով նրա որոշ հայտարարություններից եւ, իմ պարագայում, թռուցիկ զրույցից, դրական ու գործնական լիցքերով, եւ ավելի կարեւորը՝ մասշտաբային մտածողության անձ է, որ ցանկանում է իսկապես աշխատել ոչ թե իր անձի եւ կազմակերպության, այլ երկրի եւ քաղաքացու համար:

Ինչ վերաբերում է նոր կառավարության ներկայացնելիք ծրագրին, որը, հաստատենք, ինչքան էլ որ լավ պատրաստված լինի, գործնականում չի կարող սպառիչ կերպով համապատասխան լինել «շատ ծանր» որակված տնտեսության առողջացման պահանջներին: 20 օրը շատ քիչ է հասկապես խորքային խնդիրների ախտորոշման եւ բուժման ուղիները գտնելու համար: Առավելագույնը՝ այդ ծրագիրը կլինի տեսլականի մատուցում՝ խորհրդարանին եւ հասարակությանը:

Համենայնդեպս, առավել հանգամանալից այս մասին խոսելու առիթ մեր թերթը կունենա:

Սակայն մինչ այդ պետք է շեշտել ամենակարեւորը. հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը, որպես պետության եւ գործադիր իշխանության գլխավոր ղեկավար, առաջին պատասխանատվությունն է կրում նորակազմ կառավարության աշխատանքի համար: Եթե իսկապես երկրի վիճակը «շատ ծանր» է– հարցը հռետորական է– ապա դրա պատասխանատվությունը ընկնում է նաեւ իր, առաջի՛ն հերթին իր վրա: Հետայսու պետք է անցած համարել «քավության նոխազ» վարչապետների վերաբերյալ նախագահական ընկալյալ գործելակերպը: Մանավանդ որ համեմատաբար քիչ ժամանակ է մնում Նոր սահմանադրության լիարժեք կիրառմանը: Հանրապետության նախագահը հենց հիմա՛ պետք է համոզիչ ցույց տա վարչապետական դրության առավելությունները՝ դրա արդյունավետությունը պետության ու քաղաքացու համար:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

## Միայնակ՝ համակարգի դե՞մ




Զգիտենք նոր վարչապետ Կարեն Կարապետյանը նո՞ր է հայտնաբերել պետական ապարատի գործուղումների համակարգի պրիմիտիվ գողությունները, թե իր քաղաքապետ եղած ժամանակ էլ գիտեր այդ մասին, բայց չէր կարողանում բարձրաձայնել: Իսկ հիմա նոր ստատուսը նրան թույլ է տալիս ասելու՝ վերջացրեք: Ասելու՝ խելքը ճիշտ տեղ օգտագործեք: Զգիտես ինչու՝ ակամա հիշվում է այն ժամանակը, երբ Վազգեն Սարգսյանը ձեռքը սեղանին խփեց, անուններ տվեց ու պահանջեց սեղանին դնել գողացվածը: Հետոն բոլորը գիտեն: Բայց հուսանք՝ այժմ իրավիճակն էլ է այլ, մարտահրավերներն էլ այլեւս նահանջի տեղ չեն թողնում, իսկ նրանք, ովքեր չեն ըմբռնում պահի լրջությունը՝ դա իրենց պրոբլեմն է:

Ասածս այն է, որ ով չէր հավատացել փոփոխություններին՝ Կարեն Կարապետյանի՝ ընդհանուր համայնապատկերի համատեքստից կտրված կառավարանիստ ելույթները լսելով, միգուցե սկսեր հավատալ դրանց, հասկապես՝ կառավարության վերջին նիստից հետո:

Եթե չիմանար, իհարկե, որ համակարգն այնպես է բյուրեղացրել իր խորքի սխեմաները, որ ողջ համակարգին դիմակա՝ հազիվ թե մեկ մարդը կարող է բան անել, եթե լայնածավալ աջակցություն չլինի: Բայց աջակցության մասով բազմաթիվ օբյեկտիվ ու սուբյեկտիվ հակասություններ ու խնդիրներ են առկա, անգամ՝ օրենսդրորեն, որքան էլ ուզում ենք, որ մեր կյանքը փոխվի:

Օրինակ՝ էդ «վերջացրեքը» ընտրություններին էլ է վերաբերու՞մ, թե միայն նախարարություններին, առհասարակ՝ քվե գողանալուն էլ պետք է վերջ տրվի՞, թե՝ միայն թղթի վրա ծախսեր ուռճացնելուն: Եթե Կ. Կարապետյանին պատմեն, թե ինչ սխեմաներ են աշխատում ընտրությունների ժամանակ, տեսնես նա կասի՞՝ վերջացրեք, անկախ այն բանից, որ քաղաքական դեմք չէ եւ քաղաքական տեխնոլոգիաների մեջ էլ չի խորացել: Բայց ամեն տեսակ, դիցուք այժմ՝ ՏԻՄ ընտրությունների համար նաեւ ինքն է, չէ՞, պատասխանատու, այսինքն՝ վարչապետն ու կառավարությունը: Կամ մասնավոր սեկտորում՝ մարդկանց արժանապատիվ աշխատավարձ չվճարելով գողանալուն էլ պիտի վերջ տրվի՞, թե «վերջացրեքը» միայնումիայն նախարարական գործուղումների ժամանակ երակ մտնելուն է վերաբերում:

⇨2

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

## Անկախության սերմնացանը



Անկախությունը հենց այնպես չեկավ: Բառը հասկանալի էր, գաղափարը՝ հեռու: Դեռ Պարույր Հայրիկյանի անունն ու գործը մեզ անհայտ էին: Դպրոցում անգիր էինք սովորել Միքայել Նալբանդյանի «Ազատություն»-ը, Ռափայել Պատկանյան էլ էինք կարդացել՝ մակերեսը միայն, բայց թե ի՞նչ էր անկախությունը, ազատությունը, կասկածում եմ, թե գաղափար ունեինք: Երբեմն թվում էր, թե երբ վզկապ չենք կապել, կոմերիտական կրծքանշանը՝ մերժել, ավելի ուշ՝ կոմունիստական կուսակցության շարքերն անցնելու գայթակղությանն ընդդիմացել, հենց այդ սաղմը՝ ազատություն, անկախություն ունենալու՝ ծնունդից մարդուն շնորհված մեր բնական իրավունքն է չինծու պարտադրանքի առջեւ ծառս եղել: Միայն համալսարանում, օրըստօրե ըմբռնեցի, թե ինչ լուսավոր կապ կա անկախության, ազատության, հայոց լեզվով դրանք զգալու ու արտաբերելու միջեւ:

Մեր բախտը բերել էր՝ կապուտաչյա, Թումանյանի նման պարզ, Բակունցի նման բնությանը ձույլ, Տերյանի նման ազնվական մեր լուսահոգի ուսուցիչը պահանջեց, որ մեր խաթարված վարքը վերանայենք՝ նախ հայերեն ստորագրենք, հայոց լեզվի շքեղ գանձ- գոյությունը զգանք, նրա կրողն ու թագակիրը լինենք, մեր շունչն ու արտաշունչը հայոց լեզվին հանձնած՝ նոր բառերի թրթվածնով երկիր Նաիրին հասնող պահենք: Հետո հասկացա, որ մեր հայոց լեզվի դասն իրականում կամ՝ առաջին հերթին՝ անկախության դաս էր:

Թումանյան, Տերյան, Բակունց շատ էր սիրում, յուրաքանչյուրից ուներ իր ներսում, արտաքնուստ էլ նման էր, համենայնդեպս ինձ այդպես էր թվում: Ազգանունն էլ իր ներսի էության ճշգրիտ «կաղապարն» էր, ու երբ հիմա Իշխանյան եմ ասում, հայոց լեզվի իշխանի կողքին, շատ արագ՝ անքակտելի շարվում են մյուս նվիրական՝ անկախության, ազատության բաղադրիչները: Իր հերոսը Արամ Մանուկյանն էր, մերն էլ դարձրեց, իր ուսուցանած հայոց լեզուն նաեւ երգ էր, մենք էլ երգեցինք, իր ուսանողներն էին, որ Ղարաբաղյան շարժումից էլ առաջ Աբովյանից Երեւան հասան՝ բնապահպանական հոգսը օրակարգ դարձնելով, իսկ Մայիսի 28- ին առաջին անգամ Եռագույն դրոշով դուրս եկան Ազատության հրապարակ՝ նրա խոսքին հավատալով, նրան ունկնդրելու երջանկությունը ճաշակելու:

Սեպտեմբերի 21-ի սերմերը տասնամյակներ ցանել էր մեր բացառիկ ուսուցիչը՝ հայոց լեզվի՝ իմա մեր գոյության սահմանադրության պաշտպանն ու նորոգիչը՝ մեր պաշտելի Ռաֆայել Իշխանյանը:

Աշխարհն իր օրացույցն ունի, եւ սեպտեմբերի 21-ին համընդհանուր նշում է խաղաղության, երախտագիտության օրը: Խաղաղություն ինքն ուներ՝ ուժեղ անհատ էր, նույնը մեր երկրին, նրա քաղաքացուն էր մաղթում՝ ամեն տարի սեպտեմբերի 21-ին վերանորոգենք նրա խորհուրդը՝ Երրորդ ուժի բացառում: Եվ երախտագիտությամբ հիշենք անկախության, գալիքի մեր սերմնացաններին:



Նոր դեմքե՞ր, թե՞ նոր փուլ Հայաստանում

էջ 4



Տիգրան Չուխաջյան

էջ Բ,Գ



Գերմանիան իսլամացվում է դրսից ու ներսից

էջ 11

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Անկախութեան ցորենն ու յարդը

Անկախութեան 25 տարիները բաւարար պէտք է ըլլային ամէն ինչ իր տեղը իյնալու համար, սակայն այդպէս չէ: Շողշողուն ցուցադրութիւններէն եւ շռնդալից ճառախօսութիւններէն անդին ի՞նչ կայ մետալին միւս երեսին վրայ: Ճիշդ պիտի չըլլա՞ր պահ մը ամփոփուիլ եւ հաշուեյարդար մը կատարել, եղածն ու չեղածը, լաւն ու վատը ծանր ու թեթեւ ընել եւ ընդհանրապէս քառորդդարեայ անկախութիւնը փորձաքարի զարնել ու ազնուօրէն պարզել ճշմարտութիւնը:

Անցնող 25 տարիներուն ընթացքին ունեցանք Հանրապետութեան երեք նախագահ, տասնեակ մը վարչապետներ եւ անհաշիւ նախարարներ. ասոնցմէ ոեւէ մէկը արժանացա՞ւ համընդհանուր ժողովրդականութեան, ժողովուրդին սիրոյն եւ յարգանքին: Անկախ երկրի մը երեք կարեւոր խորհրդանշանները արժանացա՞ն համաժողովրդային հաւանութեան. Զինանշան, օրհներգ եւ դրօշակ. իւրաքանչիւրին մասին, մասնաւորաբար առաջին երկուքին պարագային, քննադատութիւններն ու փոխելու առաջարկները դեռ կը շարունակուին:

Իսկ որ աւելի տագնապայարոյց էին՝ երկրին տնտեսական վիճակը, չարաշահումները, կաշառակերութիւնը, փտածութիւնն ու շարունակուող արտագաղթի տխուր պատկերը չունեցան լուծում:

Դեռ կարելի է երկարել շարքը թերութիւններուն, որոնց վրայ եկաւ բարդուելու զինեալ ընդվզումը «Սասնայ ծռերու» պոռթկուն միջադէպով:

Այս բոլորով հանդերձ, դարեր ամբողջ ու անցեալ դարուն տասնամեակներ երազուած ու իրականութիւն դարձած «Անկախութիւն» հասկացողութիւնը իր հմայքով պահ մը մոռցնել կու տայ ժխտական երեւոյթները, քանի ժողովուրդը կը հաւատայ, որ մնայունը անկախութիւնն է, իսկ թերութիւնները գնայուն են, ճիշդ Խաչիկ Դաշտենցի բանաստեղծութեան մէջ յիշուածին պէս «Յարդը գնում է, ցորենն է մնում»:

Սակայն ո՞վ պիտի ըլլայ այն քաջ մշակը, որ ցորենը հովին տայ, որ յարդը տանի եւ ցորենը պահէ: Ո՞վ պիտի ըլլայ այն հովիւը, որ պաշտպանէ հօտը գայլերէն ու ինք գայլ չդառնայ իր հօտին գլխուն:

Ճիշդ է որ Հայաստանը իր աշխարհագրական դիրքով ու միջազգային յարաբերութիւններով շատ ալ բաղձալի կացութեան մէջ չի գտնուիր, սակայն քաղաքականութիւն ըսուածը լարախաղացութիւն է, եթէ լաւ խաղցուի, շատ հարցեր կրնան չէզոքանալ յօգուտ երկրին: Մերը «Թիթանիքի» նման շոգենա՞ւ է, թէ՞ մակոյկ. երկու պարագաներուն ալ հմուտ նաւավար մը քաղաքականութեան ծովուն մէջ ժայռեր ու սառցալեռներ շրջանցել գիտնալու է:

Բաւ է որքան հպարտացանք մեր անցեալով, մեր անցեալի փառքերով: Պէտք է հասկնանք, որ պատմութեամբ բաւարարուիլ չըլլար, զայն հիմքի վերածելով նորը կառուցելու է, որ հինը շղթայուի մեր ներկային: Մեր անցեալի յաջողութիւններն ու նուաճումները բարձի վերածած՝ մեր գլուխները վրան դնելով չքնանանք, նորին մասին մտածենք, նորը կառուցելու եւ ամրապնդելու մասին մտածենք, նոր յաջողութիւններ եւ նուաճումներ արձանագրենք, որպէսզի իսկապէս արժանի ըլլանք հինէն մեզի հասած ջահը բարձր ու վառ պահելու:

Ունինք ատակ մարդիկ բոլոր ասպարէզներուն մէջ ալ, մայր հողը երբեք չամլանար, հողը չի դաւաճաներ, հարկ է դռները բանալ, միաւորել մեր անհատ, տարտղնուած ուժերը եւ ամրացնել քսանհինգամեայ անկախ Հայաստանը, որ դառնայ իսկական մարմնացումը ժողովուրդի երազներուն, ըլլայ ուժեղ, յաղթական, սիրուած ու գնահատուած. այն ատեն միայն, առանց դոյզն վերապահութեան, կարելի է ուրախանալ անկախութեամբ: Մենք լաւատես ենք:

Այս բոլորով հանդերձ, տօնդ շնորհաւոր, ի՛մ երկիր:

Դոկտ. ՌՈՒԲԻԿ ՍԱՐԴԱՐՅԱՆ

**Թեհրան**

# Գագիկ Ծառուկյանի այցը իրանահայ համա՞յնք, թե՞ դաշնակցությանը

2016 թվականի սեպտեմբերի 13-ին ՀՀ Ազգային Օլիմպիական կոմիտեի նախագահ պրն. Գագիկ Ծառուկյանը Թեհրանի «Արարատ» կազմակերպության 48-րդ համահայկական խաղերի առիթով այցելեց Թեհրան: Նա հիմնականում եղավ ՀՅԴ-ին ենթակա «Արարատ» կազմակերպությունում եւ ՀՅԴ-ի պաշտոնաթերթ «Ալիք»-ի խմբագրությունում, այդ երկու դաշնակցական միավորներից յուրաքանչյուրին նվիրաբերելով 100 հազարական դոլար:

Ողջունելի է նման նվիրատվությունը հայկական որեւէ մարզական, մշակութային կամ մամուլի միավորներին: Սակայն անիրական մոտեցումները եւ վերլուծությունները այս այցի կապակցությամբ պատճառ դարձան, որ պրն. Գագիկ Ծառուկյանին ու իր թիմակիցներին եւ հարգելի ՀՅԴ ղեկավարության ուշադրությանը ներկայացնել հետեւյալ կետերը:

1-Թեհրանում գոյություն ունեն տարբեր բնույթի մարզամշակութային միություններ ու մամուլի կենտրոններ: Պրն. Ծառուկյանը չի այցելել իրանահայ համայնք, այլ դաշնակցության երկու կարեւոր կենտրոններ:

2-Դաշնակցության այդ երկու կենտրոնները համարվում են ամենալավ ֆինանսավորված եւ եկամուտ ունեցող կենտրոնները, այդ իսկ պատճառով թող պրն. Ծառուկյանը իմանա, որ մեր համայնքում կան նաեւ գոյությունը վտանգված նման կենտրոններ, մամուլ ու կայքէջեր, որոնք նաեւ նյութականի պատճառով դադարեցրել են իրենց աշխատանքները կամ էլ տարածքային խնդիրների պատճառով վտանգի տակ են գտնվում: Ուրեմն նրա օգնությունը այնքան էլ իրանահայ համայնքին ուղղված չի եղել, այլ՝ Դաշնակցությանը:

3-Պրն. Ծառուկյանը իր խոսքերում շեշտեց, որ արդեն Հայաստանն է օգնում սփյուռքին: Շատ լավ կլիներ, որ դա իրականություն դառնար, բայց դժբախտաբար բոլոր տնտեսական տվյալները ցույց են տալիս, որ առայժմ նման բան չի կարող տեղի ունենա: Պրն. Ծառուկյանի օգնությունը անհատական բնույթ է կրում: Եթե Հայաստանը օգներ, վստահ եմ, որ ամբողջ համայնքին նկատի կառներ եւ ոչ թե միայն Դաշնակցությանը: Պրն. Ծառուկյանը իր ունեցած ու նրան հրամցրած տեղեկությունների ու համոզումների սահմաններում է օգնություն ցուցաբերել, մինչդեռ ավելի շատ նման օգնությունների կարիք ունեն Հայաստանի՛ տարբեր մարզամշակութային միավորներն ու մամուլը:

4-Իրանում ՀՀ դեսպանատունը նաեւ այդ այցի արանքներում երեւում էր ու մի հանդիպում էլ դեսպանատանը տեղի ունեցավ, սակայն դժբախտաբար դեսպանատունը այդ հնարավորությունը կամ համոզմունքը չունի, որ իր երկրի բարեգործին ներկայացնի ամբողջ համայնքին:

5-«Արարատ» կազմակերպությունը եւ «Ալիք» օրաթերթը գտնվում են ոչ հայկական թաղամասերում, լավ կլիներ պրն. Ծառուկյանը այցելեր հայաբնակ թաղամասեր, որտեղ գտնվում են հայկական դպրոցներն ու մարզամշակութային միությունները:

Կրկին ողջունելով պրն. Ծառուկյանի բարեգործությունները կը խնդրեինք, որ այն չվերագրեն մեր համայնքին: Լավ կլինի դա վերագրեն իրենց կուսակցական կամ Դաշնակցության ղեկավար անհատների հետ հարաբերություններին: Պրն. Ծառուկյան, դուք այցելել եւ ծանոթացել ու Ձեր նվիրատվությունն եք ցուցաբերել ոչ թե իրանահայ համայնքին, ինչպես հայտարարվում է, այլ Դաշնակցության երկու կենտրոններին:

# Միայնակ՝ համակարգի դե՞մ

⇨1

Հակասություններն ամենուրեք են:Կարեն Կարապետյանը կարծես թե տեխնոկրատների կառավարություն է կազմում, պրոֆեսիոնալ կառավարիչների նշանակումն, իհարկե, ողջ աշխարհում աշխատող կառավարելու թիվ մեկ տարբերակն է: Բայց նայեք՝ հակասությունն արդեն մեր փոխված Սահմանադրության եւ Ընտրական օրենսգրքի մեջ է: Մենք որդեգրել ենք 100 տոկոս համամասնական ընտրակարգը, որն աշխատում է այն երկրներում, ուր երկու-երեք մեծ կուսակցություններ կան, ու կուսակցական համակարգն իսկապես կարող է այլընտրանք առաջարկել գործող կառավարությանն ու իշխող կուսակցությանը: Մեր դեպքում տեսեք ինչ է ստացվում. կուսակցական ցուցակներով պետք է ընտրությունների գնանք, այդ նույն կուսակցականներից առաջադրենք վարչապետ ու նախարարներ (բազմիցս գրել ենք, որ շատ պրոֆեսիոնալներ, չուզենալով որեւէ կուսակցության մեջ լինել՝ դուրս կմնան կառավարմանը մասնակցելու հնարավորությունից), սակայն այժմ այն, ինչ անում է Կ. Կարապետյանը, հակասում է այդ նոր ընտրակարգի տրամաբանությանը: Նա բերում է իր հավատարիմներին՝ լավ մենեջերների, ինչպես ասում են, որոնք գործող իշխող կուսակցության հետ կարծես թե կապ չունեն, իսկ մեր քաղաքական դաշտը նոր կառավարության ձեւավորման առումով հիմա դիտորդի կարգավիճակում է փաստորեն (ՀՅԴ-Կ.Կարապետյան լարվածությունը եւս այդ համատեքստում դիտարկեք)՝ ոչ մի բանի մասնակից չէ: Կ. Կարապետյանը, հաջողելու դեպքում, իհարկե, 2017 թվականի խորհրդարանական ընտրություններում ՀՀԿ-ի՝ վարչապետի թեկնածու կարող է լինել, բայց կարող է նաեւ չլինել, դա իր իրավունքն է, մանավանդ՝ եթե ՀՀԿ-ի հետ կապ չունեցող իր թիմով հիմա հաջողի: Հաջողելու դեպքում եթե նա չի ուզում լինել ՀՀԿ թեկնածու, ինքնին առաջանում է հակասությունը: Սա այն դեպքում՝ երբ նա սկզբնապես արդեն անցումային վարչապետ չէ, մի ուրիշի փափուկ վայրէջքը կազմակերպելու համար: Այժմ արդեն իսկ ողջ կեցվածքով Կ. Կարապետյանը կարծես անտեսում է քաղաքական դաշտը: Ինչպես որ տարիներ հանրությունն էր օտարված քաղաքական գործընթացներից, հիմա քաղաքական դաշտն է օտարված տեղի ունեցողից: Իսկ նույն քաղաքական դաշտը, որն իր կառուցվածքով ու նպատակներով արդեն իսկ բարեփոխումները դանդաղեցնող է (քանի որ զուտ կուսակցականներին, իսկ որ ավելի վատ է՝ խնամի-ազգականական հյուսվածքով միմյանց շուլալված կուսակցական վարչարարներին առաջ մղելու խնդիր է դնում առավելապես, ինչը, երեւում է, Կ. Կարապետյանի սրտով չէ), կարող է Ազգային ժողովում տապալել նրա ծրագիրը: Անգամ Ազգային ժողովի եկող շաբաթ կայանալիք այն արտահերթ նիստը, որտեղ կառավարության նոր կառուցվածքը պետք է հաստատվի, մի քիչ եթե չափազանցությունների գիրկն ընկնենք՝ կարող է մկաններ ցույց տալ քաղաքական դաշտը երկրորդ պլան մղած վարչապետին: Տեսականորեն, իհարկե:

Այսինքն՝ այն, ինչ տեղի է ունենում հիմա, միգուցե իսկապես պահանջարկված ու սպասված է հանրության կողմից վաղուց, սակայն համակարգը, որին կարծես թե պատերազմ հայտարարելու փորձ է անում նոր վարչապետը, բազմաթիվ հնարավորություններ ունի առհասարակ փոփոխություններ թույլ չտալու, ինչպես որ երկար ժամանակ չի թույլատրել, քանի որ դա համակարգի շահերից չի բխում:

Անգամ ՏԻՄ ընտրությունների ընթացքում եղած միջադեպերն են խոսում այն մասին, որ համակարգը փոխվելու նշաններ ցույց չի տալիս: Վերցնենք թեկուզ Գյումրիի ողբերգական դեպքը: Ընտրություններին մասնակցող կուսակցություններից մեկի՝ ԲՀԿ-ի քաղաքապետի թեկնածու Վարդեւան Գրիգորյանի որդուն մահացած են գտել, իսկ իրավապահ համակարգը միանգամից խոսում է ինքնասպանության վարկածի մասին: Սա օրենսդրության խախտում է արդեն՝ Հայաստանի գլխավոր դատախազն է անգամ ինքնասպանության վարկածը հնարավոր համարել: Մինչդեռ խոսվում է ոչ կոռեկտ մի գովազդային վահանակի եւ դրա շուրջ տեղի ունեցած «ռազբորկաների» մասին, որոնք պիտի ենթադրեին հավասար այլ վարկածների գոյությունը եւ տեղի ունեցածի քաղաքական ենթատեքստը: Հիմա համակարգի՝ ինչ- որ վարկածի հավանականության մասին արտահայտվելու շտապողականությունը չի՞ խոսում այն մասին, որ համակարգը չի ուզում իրերի դրության փոփոխություն, միգուցե հենց տեղի ունեցածը սպանություն է ընտրական հողի վրա, ինչո՞ւ ուղղորդել, եթե այլ շահեր չկան: Դե հիմա Կ. Կարապետյանը ոնց պետք է իրար փոխկապակցված էս համակարգի դեմ դուրս գա, կամ ոնց պետք է սովորեցնի, որ ոչ կոռեկտ գովազդային վահանակը անմաքուր ընտրապայքարի կամ գոտկատեղից ներքեւ հարվածելու կարծրացած սովորույթ է:

Կամ՝ Էջմիածնում տեղի ունեցած ՏԻՄ ընտրություններին եւս նախորդել է մի անմաքուր պատմություն, հիմա ոնց պետք է իրական ճշմարտության բացահայտումը կախված չլինի ուժեղներից:

Այնպես որ՝ որքան էլ նախագահ Սարգսյանն ասի բարեփոխումների արագացված փուլի մասին՝ համակարգային փոփոխություններով որակապես նոր պետություն ունենալու հեռանկարով, վստահեցնի, որ նախանշված հստակ քայլերի հաջորդականություն կա, որին ոչ ոք չի կարող խանգարել, կյանքն այլ բան է ցույց տալիս: Հա, միգուցե անհատները չեն կարող կամ չեն համարձակվի անձնապես խանգարել, բայց համակարգը կխանգարի: Մանավանդ՝ այնքան էլ չի հասկացվում, թե երկու ձեռքերը նո՞ւյն նպատակի համար են գործում, թե տարբեր:

Չի հասկացվում, թե ինչ է լինելու նոր խորհրդարանական ընտրություններից հետո, խորհրդարանական նոր խճանկարն ու նոր կառավարությունն ինչպե՞ս են գործակցելու, եթե հիմա արդեն կառավարության ձեւավորումն ու Կ. Կարապետյանի գործելակերպը մի տեսակ արդեն այլ հեռանկար են հուշում:

Ընտրություններից ընդամենը ամիսներ առաջ չի երեւում, թե ո՞վ է ապագա վարչապետը (համենայնդեպս՝ վիզուալ), կամ ո՞նց են զուգահեռ նույն լիազորություններով երկու ֆիգուր՝ վարչապետը եւ մինչեւ 2018 թվականի գործող նախագահը նույն լիազորությունները միաժամանակ բանեցնելու:

Նկատելի է, որ քաղաքական ուժերը շփոթված են այս բոլորից, եւ չգիտեն իրենց ինչպես պահել: Անգամ Նիկոլ Փաշինյանի եւ Էդմոն Մարուքյանի ղեկավարած ուժերի մրցակցությունը Վանաձորում սպասվելիք ընտրությունների համատեքստում այդ իներցիայից դուրս չէ: Բայց եկող շաբաթ խորհրդարանի արտահերթ նիստում երեւի կերեւա, թե համակարգի հիմնական թեւերը խորամանկորեն ինքնապաշտպանվո՞ւմ են, թե՞ տրվում են արագացված փոփոխություններին:

AZG NEW SHABAT 1.QXD 22/09/2016 21:28 Page 3



# Արհեստավարժների թիմ, բայց ոչ «ազգային համաձայնության կառավարություն»

## *Կարեն Կարապետյանը չի սահմանափակվում միայն անձերի փոփոխությամբ*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Նորանշանակ վարչապետ Կարեն Կարապետյանը սկսել է ձեւավորել իր գլխավորած կառավարության նոր կազմը: Արդեն հայտնի են նախագահի հրամանագրերով նշանակված նախարարները: Ֆինանսների նախարար Վարդան Արամյան, տրանսպորտի եւ կապի նախարար Վահան Մարտիրոսյան, էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Աշոտ Մանուկյան, գյուղատնտեսության նախարար Իգնատ Առաքելյան: Բացի առաջինից, նրանք բոլորն էլ հասարակությանը անհայտ անձինք են, որոնք, սակայն, իրենց ոլորտներում հայտնի են որպես կայացած եւ հաջողությունների հասած մարդիկ:

Եթե նկատի ունենանք, որ վերանշանակվել են կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանը եւ փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման եւ բարեփոխումների նախարար Վաչե Գաբրիելյանը, ապա առաջին եզրակացությունն այն է, որ վարչապետն աշխատելու է միասնական թիմով, ոչ թե իշխանական այս կամ այն ուժի ազդեցությամբ նախարարական պորտֆել զբաղեցնողներով, իսկ երկրորդ եզրակացությունը, որ նա հավաքում է ինտելեկտուալների եւ իրենց ոլորտում արհեստավարժ համարվողների:

«Արհեստավարժ» անվանումը հիշեցնում է 18 տարի առաջ նման անվանում ստացած Արմեն Դարբինյանի գլխավորած կառավարությանը, որը թերեւս Հայաստանի Հանրապետության պատմության ամենաանհաջող կառավարություններից էր: Սակայն, բնականաբար, դա չի կարող նույնականացվել Կարեն Կարապետյանի գլխավորած կառավարության հետ՝ ժամանակներն են տարբեր եւ ամենակարեւորը՝ վարչապետները:

Միեւնույն ժամանակ, նոր կառավարությունը «ազգային համաձայնության կառավարություն» համարել չի կարելի: Գուցե ավելի ճիշտ կլիներ, որ նախագահ Սերժ Սարգսյանը հայտարարեր, որ ստեղծելու է ոչ թե «ազգային համաձայնության», այլ «արմատական բարեփոխումների» կամ «փոփոխությունների» կառավարություն: Այլապես, դարձյալ անհասկանալի է մնում, թե ի՞նչ նկատի ուներ նախագահը «ազգային համաձայնության կառավարություն» ասելով, եթե նոր ձեւավորվող կառավարությունը կազմված չէ տարբեր քաղաքական ուժերի ներկայացուցիչներից: Նման կառավարությունները սովորաբար կազմվում են այդ ձեւով, ինչը եղել է նաեւ գործող նախագահի օրոք: Միաժամանակ, «ազգային համաձայնության» կամ կոալիցիոն կառավարությունները ամենակաշկանդված եւ անարդյունավետն են լինում, եւ լավ է, որ նոր կազմվող կառավարությունն այդպիսին չէ:

Ինչ մնում է նոր վարչապետին, ապա այն, որ նա գնալու է ոչ միայն անձերի փոփոխության ճանապարհով, պարզ դարձավ կառավարության երեկվա նիստից, որտեղ որոշում ընդունվեց Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնել կառավարության կառուցվածքային փոփոխությունները՝ իրականացվելիք ծրագրերին համապատասխան:

Այսպես, Էկոնոմիկայի նախարարությունը վերանվանվում է Ներդրումների եւ ձեռնարկատիրության աջակցության նախարարության, որից դուրս են գալու զբոսաշրջությունն ու տեղեկատվական տեխնոլոգիաները: Առաջինը նախատեսվում է դարձնել առանձին կոմիտե, որի առաջ, ըստ Կարեն Կարապետյանի, պետք է դրվեն զբոսաշրջային հոսք ապահովելու խնդիրները եւ որը պետք է ներկայացնի, թե ինչն է խանգարում դրան: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը մտնելու է դարձյալ վերափոխվող՝ տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության մեջ: Վերջինիս կազմում նախատեսում է ընդգրկել նաեւ քաղաքացիական ավիացիայի վարչությանը:

Վերադառնալով Ներդրումների եւ ձեռնարկատիրության աջակցության նախարարությանը, այն, ինչպես նշել է վարչապետը, պետք է լինի նախարարություն, որը գործարարի կամ ներդրողի «ձեռքից բռնած» ուղեկցի նրան, որպեսզի տարբեր օղակներում վերջինս խոչընդոտների չհանդիպի:

Քաղաքաշինության նախարարությունը եւս վերակազմակերպվում է եւ ստեղծվելու է կոմիտե, որը ենթադրվում է, որ կզբաղվի ճարտարապետության եւ մշակութային հուշարձանների պահպանության խնդիրներով:

Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարությունը պետք է դառնա էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարություն, որին փոխանցվելու է ջրային տնտեսության պետական կոմիտեն: «Տրամաբանությունն այն է, որ գյուղացուն չպետք է նեղացնենք, սակայն դա բերում է ոչ էֆեկտիվ ծախսերի», մանրամասնել է Կարեն Կարապետյանը:

Սպասվում է, որ մնացած նախարարները կնշանակվեն կամ կվերանշանակվեն առաջիկա օրերին: Սակայն, ակնհայտ է, որ նոր կառավարության «կորիզը» արդեն ձեւավորված է, տնտեսական բլոկի նախարարները արդեն հայտնի են եւ նրանք հնարավորինս շուտ սկսելու են նախանշված ծրագրերի իրականացմամբ զբաղվել:

Հարկ է նշել նաեւ, որ ուժային նախարարների փոփոխությունը կամ վերանշանակումը վարչապետի թիմի համար թերեւս այդքան էական չեն, քանի որ երկրի պաշտպանության, ազգային անվտանգության, ներքին անվտանգության եւ արտաքին քաղաքականության ոլորտները ղեկավարվում եւ համամարգվում են նախագահի կողմից: Նրանց գործառույթներից դուրս են տնտեսական քաղաքականության վրա ազդեցություն ունենալը:

Մնում է միայն սպասել նոր կառավարության ծրագրին եւ հետեւել դրա արդյունավետությանը:

# «Իսկանդերի» ուղերձը եւ Ռուսաստան-Հայաստան դաշինքը

## *Ադրբեջանական վայնասուն՝ փոխանցված տեղական գրանտակերներին*

Հայաստանի անկախության 25-ամյակի շքերթը, բացի մեր բանակի եւ պետության կայացվածության մասին վկայելուց, առանձնահատուկ էր ցուցադրված զինտեխնիկայի առումով եւ դրանով պայմանավորված ուղերձով:



**Առանձնահատկությունը, մասնավորապես, հայկական բանակի համալրումն էր ժամանակակից զինտեխնիկայով: «Իսկանդեր» հրթիռային համակարգը գլխավոր հաճելի անակնկալն էր մեզ համար եւ վայնասունի առաջացման պատճառը հարեւան Ադրբեջանում:** Փաստը, որ բացի Հայաստանից Ռուսաստանը ոչ մի այլ երկրի չի տրամադրել այդ համակարգը, չնայած բազմաթիվ դիմումների եւ ձեռնտու առաջարկների՝ այդ թվում Սաուդյան Արաբիայի պես հարուստ երկրի կողմից, առիթ տվեց, որպեսզի մեր թշնամի երկրում վայնասունը փոխարինվի ցանկալին իրականի փոխարեն մատուցվող մեկնաբանություններով, իբր թե դա ոչ թե Հայաստանին է պատկանում, այլ ռուսական ռազմակայանին: Ադրբեջանի այս վարկածը, մեծագույն հաճույքով, որպես փոխանցում վերցրեցին ամերիկյան եւ եվրոպական գրանտակերները, որոնք էլ իրենց հերթին սկսեցին իրենց տխմար «մեկնաբանությունները»՝ «պռակատով են տվել պառադի համար», «դրանք մերը չեն», «հին զենք են տվել» եւ այլն:

Այդուհանդերձ, նաեւ ռուսական աղբյուրները հաստատեցին, որ այդ հզոր զենքը ՀԱՊԿ շրջանակներում ներքին գներով տրամադրվել է Հայաստանին եւ այն 200 մլն դոլար ռուսական վարկի շրջանակներում չէ: Պարզապես համառոտ տեղեկացնենք, որ «Իսկանդերը» հնարավորություն է տալիս ոչնչացնել հակառակորդի զորքի կուտակումները, ճշգրիտ հարվածներ հասցնել նրա հրամանատարական կետերին, ոչնչացնել նրա հրթիռահրետանային մարտկոցները եւ այդ ամենը մինչեւ 500 կմ հեռավորության վրա (փորձագետները նշում են, որ Հայաստանին տրամադրվել է մոտ 300 կմ հեռավորության վրա խոցելու հնարավորություն ունեցող «Իսկանդեր»): Ընդ որում, նշանակետի ճշգրտությունը տատանվում է 1-2 մետրի սահմաններում: Այսինքն, դրանք, ըստ էության, անվրեպ հրթիռներ են, եւ իսկապես լուրջ զսպիչ գործոն կարող են հանդիսանալ Ադրբեջանի համար:

Բացի «Իսկանդերից», Հանրապետության հրապարակով անցան նաեւ բազմիցս քննարկման առիթ դարձած «Սմերչ» համազարկային կրակի համակարգերը, որոնք ուներ Ադրբեջանը եւ հիմա ունենք նաեւ մենք, ապա նաեւ «Ինֆաունա» եւ «P-325У» ռադիոէլեկտրոնային պայքարի, «Բուկ» զենիթահրթիռային համակարգերը եւ այլն: Սրանք արդեն 200 մլն դոլար վարկի շրջանակներում ստացված զինատեսակներն են, որոնց Հայաստան հասնելու մասին ավելի վաղ նշել էին պաշտպանության ոլորտի պատասխանատուները:

**Անկախության 25 ամյակի շքերթի ուղերձն, անշուշտ, առաջին հերթին ուղղված էր Ադրբեջանին՝** 1. Մենք ունենք զենք, որ դուք չունեք, չնայած ձեր նավթային միլիարդներին, 2. Մենք արդեն ունենք այն զինատեսակները, որոնք դուք ունեիք նախկինում եւ մենք չունեինք, 3. Նոր պատերազմի սկսելու դեպքում այս ամենը կգործադրվի եւ հետեւանքները ձեզ համար ողբալի կարող են լինել, 4. Ռուսաստանը, որքան էլ որ ձեզ զենք վաճառի, մեր ռազմավարական դաշնակիցն է եւ կատարում է իր պարտավորությունները՝ այդ թվում ժամանակակից զինտեխնիկայի մատակարարման առումով:

**Այս շքերթի առանձնահատկությունը շատ ծանր կտանեն նաեւ վերեւում նշված գրանտակերները, որոնց համար հակառուսական արշավը գոյության, ապրուստի միջոց է:** Իհարկե, բացահայտ կեղծիքներ տարածելը, ագրեսիվ հռետորաբանությունն ու անհանդուրժողականությունը կշարունակեն մնալ նրանց զինարանում: Պարզապես, վերնշյալ զարգացումները կդժվարացնեն նրանց այդ սեւ գործը: Ինչ մնում է վերջիններիս քարոզչությանը զոհ դարձած մարդկանց, ապա շատերը կհասկանան, որ Ռուսաստան-Հայաստան դաշինքը իսկապես ռազմավարական է եւ անհրաժեշտ է ինչպես մեզ, այնպես էլ Ռուսաստանին: Ոմանք արդեն սկսել են դա ընկալել, ինչը նկատվում է անգամ ապատեղեկատվության տարածման պարարտ հող ֆեյսբուքում եւ սոցիալական այլ ցանցերում:

Մարդիկ սկսել են հասկանալ, որ, այո, Ռուսաստանն ունի իր պետական շահերը, որ Ռուսաստանն իր այդ շահերից ելնելով է մեզ էժան գներով ժամանակակից սպառազինություն տրամադրում, իսկ որոշ զինատեսակների ուշացումով տրամադրումն էլ ավելի շատ մեր պետության ղեկավարների ուշացած աշխատանքի հետեւանք է, որ Հայաստանն էլ ունի իր պետական շահերը եւ հենց այդ շահերն են պահանջում լինել դաշնակից Ռուսաստանին, քանզի այդ դաշինքը մեր ազգային-պետական անվտանգության կարեւորագույն բաղադրիչն է, որ Ռուսաստանն էլ այս տարածաշրջանում իր ներկայությունն է պահպանում Հայաստանի շնորհիվ, որ դաշնակիցների միջեւ կարող են լինել խնդիրներ, որոնք հաղթահարվում են, եթե ջանքեր են գործադրվում շահերի հնարավորինս ներդաշնակեցման ուղղությամբ, որ ի վերջո, այդ ռազմավարական դաշինքը բնական է դարձնում նաեւ ռուսական 102-րդ ռազմակայանի զորախմբի ներկայությունը եւ ռուսական դրոշի ծածանվելը Հայաստանի անկախության 25-ամյակի շքերթին:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Նոր դեմքե՞ր, թե՞ նոր փուլ Հայաստանում

**ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ**

**Դետրոյթ, ԱՄՆ**

Անկախության 25 տարիների ընթացքում Հայաստանն ունեցավ երեք նախագահ եւ տասնչորս վարչապետ: Վարչապետների մեծ մասն եկավ ու գնաց առանց մեծ աղմուկի: Բայց Հովիկ Աբրահամյանի հրաժարականն ու նրան փոխարինող Կարեն Կարապետյանի նշանակումը տարբեր ենթադրությունների եւ մեկնաբանությունների դուռ է բացել:

Աբրահամյանը երկրին ծառայեց մոտ երկուսուկես տարի: Դրանից առաջ նա զբաղեցրեց խորհրդարանի նախագահի պաշտոնը՝ դուրս թողնելով առավել նրբաճաշակ եւ խորագիտակ պետական գործիչ Տիգրան Թորոսյանին:

Նրա վարչապետ նշանակվելը խոստանում էր լուրջ եւ կարեւոր տնտեսական բարեփոխումներ առաջացնել երկրում: Այդ խոստումները ոչ միայն մնացին չիրագործված, այլեւ, ինչպես «Էկոնոմիստ» պարբերականն է նշում վերջերս իր հոդվածներից մեկում, պետության արտաքին պարտքը անցավ հինգ միլիարդ դոլարի սահմանագիծը:

Երբ Աբրահամյանը վարչապետ դարձավ, Հայաստանում շատերը երկյուղ զգացին, որովհետեւ նա չուներ իր նախորդների բարեկրթությունը, եւ նրանք վախենում էին, որ նա երկիրը կխայտառակի արտասահմանյան դիվանագիտական շրջանակներում: Գործարարի խորաթափանցությունը, որն օգնել էր նրան դիզելու իր անձնական հարստությունը, ոչ մի ձեւով չնպաստեց երկրին: Փոխարենը նա իր ունակություններն է՛լ ավելի զարգացրեց բանսարկություններ եւ ընտրական խարդավանքներ ի գործ դնելով, որոնք Հայաստանը պիտակավորեցին որպես կոռումպացված երկիր:

Իսկ ի՞նչը դարձավ նրա անկման պատճառը, երբ թվում էր, թե կատարելապես համապատասխանում է երկրի համատարած կաշառակերության մթնոլորտին: Որոշ վերլուծաբաններ հավատացած են, որ պատճառը երկրի տնտեսությունը չկարողանալ վերականգնելն է: Ուրիշներ պնդում են, որ «դրամատիկական փոփոխություններ» են սպասվում, որոնք կարող են ազդարարել նախագահ Սերժ Սարգսյանի իշխանության ավարտի սկիզբը: Մի երրորդ խումբ էլ ենթադրում է, որ նախագահը կարիք ուներ դրական մի ազդանշան ուղարկելու Մոսկվային՝ Հ. Աբրահամյանին փոխարինելով Կրեմլին ավելի լավ հայտնի մեկ ուրիշ անձնավորությամբ: Երբ ռուսական ազդեցությունն այնքան իշխող է Հայաստանում, ոչ մի քաղաքագետ չի կարող հակակրեմլական երեւալ: Բայց կարծես հավատարմության տարբեր աստիճաններ կան:

Ընդդիմադիր կողմից ներկայացուցիչներ հավատացած են, որ փոփոխությունները ընդամենը «կոսմետիկական» են: Ուրիշներ պնդում են, որ դրանք «Սասնա ծռեր» շարժման զինված հարձակման անմիջական հետեւանքն են: **Երվանդ Բոզոյան** անունով մի հոդվածագիր էլ այդ փոփոխություններում տեսնում է «նախապատրաստություն առաջիկա ընտրությունների»: Նրա կարծիքով Սերժ Սարգսյանը պայքարում է զբաղեցնելու վարչապետի պաշտոնը, իսկ Աբրահամյանը կարող էր խոչընդոտ լինել նրա ճանապարհին:

Հրաժարականի իր խոսքում Աբրահամյանը նշեց, որ իր այդ քայլով ճանապարհ է հարթում ձեւավորելու Սերժ Սարգսյանի խոստացած կոալիցիոն կառավարությունը:

Սպասվող նոր կաբինետի ձեւավորման արդյունքում առավել լուրջ, հիմնական փոփոխությունների մասին խոսակցությունները, զարգացումներն ու որոշումներն արդեն իսկ ընթացքի մեջ են: Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը վերջերս մեդալով պարգեւատրեց Հայաստանի արտգործնախարար Էդուարդ Նալբանդյանին առ ի գնահատանք նրա գործունեության: Բայց հակառակ այդ դրական ժեստին, խոսակցություններ կան, որ նրան փոխարինելու է գալու նախագահի աշխատակազմի ղեկավար, արեւմտյան կրթություն ստացած Վիգեն Սարգսյանը, որ գուցե ամենաժամանակակից մտածողության տեր անձնավորությունն է ողջ կառավարությունում:

Նալբանդյանն իրեն գերազանց է դրսեւորելու որեւէ աշխատանքում կամ պաշտոնում: Հայ-ֆրանսիական հարաբերություններն իրենց գագաթնակետին հասան Փարիզում որպես Հայաստանի դեսպան իր պաշտոնավարության ընթացքում: Թվում է, թե նա նորից այնտեղ է ուղեւորվելու՝ փոխարինելու համար ներկայիս Հայաստանի ներկայացուցչին՝ վերջինիս արտաքին քաղաքականության համար այդ շատ կարեւոր երկրում:

Սպասվող մեկ այլ փոփոխություն կապված է պաշտպանության ներկա նախարար Սեյրան Օհանյանի հետ, որին գուցե առաջարկվի զբաղեցնել ՆԱՏՕ-ի ռուսական տարբերակի՝ «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության» (ՀԱՊԿ) գլխավոր քարտուղարի պաշտոնը:

Կարեն Կարապետյանը նոր դեմք չէ Հայաստանի քաղաքական դաշտում: Նա ճանաչված ու հարգված դեմք է: Կարճ ժամանակ նա Երեւանի քաղաքապետն էր, նախքան Մոսկվա տեղափոխվելը:

Բոլոր առումներով Կարապետյանը Աբրահամյանի հակապատկերն է: Բարեկիրթ եւ նրբաճաշակ տեխնոլոգը չի խրախուսում քաղաքական ներքին բանսարկությունները, ավելի սիրալիր ու քաղաքավարի է եւ թրծված է միջազգային մակարդակի գործելակերպում:

Տարբեր շրջանակներում տարբեր ձեւով են մեկնաբանում նրա նշանակումը:

Որոշներ գտնում են, որ որպես ձեռնհաս տնտեսագետ, նա կարող է իրականացնել մտահղացված շատ գաղափարներ, բարեփոխումներ: Նա մեծ կապիտալի տեր է Հայաստանում եւ նրա սահմաններից դուրս եւ այդ առումով գուցե կարողանա արտասահմանյան ներդրումներ ապահովել երկրի համար: Ուրիշներ հավատացած են, որ նա պարզապես Կրեմլի դրածոն է Երեւանում՝ հանդարտեցնելու համար հետզհետե աճող հակառուսական տրամադրությունները Հայաստանում: Լուրեր են պտտվում նաեւ այն մասին, որ իր նորանշանակ պաշտոնում նա կկարողանա վերահսկել հետընտրական քաղաքական զարգացումները: Արեւմուտքի թողտվությամբ, առաջիկա երկու տարիներում կայանալիք խորհրդարանական եւ նախագահական ընտրությունների արդյունքում Հայաստանը կարող է թեքվել դեպի Եվրոպա, նսեմացնելով ռուսական ռազմաբազայի գոյությունն ու նրա ազդեցությունը Կովկասում:

Վերլուծաբան **Լեւոն Շիրինյանն** անցյալ շաբաթ գրում էր, որ իր համոզմամբ Կարապետյանի նոր նշանակումը նպատակ ունի հակակշռելու Հայաստանում ձեւավորված այն կարծիքը, որ Ռուսաստանն էր հրահրել ազերիների քառօրյա հարձակումը Ղարաբաղի վրա: «Բացի այդ, Հայաստանում տեղի ունեցած ապստամբությունը ցույց տվեց, որ անկախության դիմաց տարածքներ զիջելու տարբերակը, որ Ռուսաստանն է առաջ քաշում, չի կարող գործադրվել: Այդ պատճառով էլ Ռուսաստանը որոշեց ավելի ուժեղ ներկայություն ապահովել Հայաստանում ի դեմս շրջահայաց մի պետական գործչի, ով կկարողանա առավել սերտորեն համագործակցել Կրեմլի հետ», եզրակացնում էր նա:

Ինչ էլ լինի պատճառը պետք է խոստովանել, որ փոփոխությունն անհրաժեշտություն էր Հայաստանում: Բայց ոչ թե դեմքերի, անհատների փոփոխություն, այլեւ ըմբռնումների, ընկալումների փոփոխություն: Ապստամբությունից հետո նախագահ Սարգսյանը նրբորեն ակնարկեց, որ ինքը հասկացել է ժողովրդի ուղերձը:

Երեք նախագահ եւ 14 վարչապետ ունենալը չի խոսում կայունության մասին: Առաջիկա ընտրություններն ու ղարաբաղյան բանակցությունների անարդյունավետությունը հաշվի առնելով պետք է նշել, որ կայունությունը օդի եւ ջրի պես անհրաժեշտ է մեզ հիմա, որպեսզի երկիրը կարողանա դուրս գալ այս ճահճից:

Դեմքերի փոփոխությունը ողջունելի է, պայմանով, որ դրան ուղեկցի նոր փուլը Հայաստանի քաղաքական, տնտեսական եւ սոցիալական կյանքում:



**Թարգմ. Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆԸ**
**Armenian Mirror-Spectator**

## Հայաստանի 25-ամյակը ԱՄՆ-ի կոնգրեսի գրադարանում

**Մ. Նահանգների կոնգրեսի գրադարանի Թոմաս Ջեֆերսոնի անվան մասնաշենքի հյուսիսարեւելյան սրահում սեպտեմբերի 21-ին, չորեքշաբթի օրը, դասախոսությամբ հանդես կգա Մեդֆորդի (Մասաչուսեթս) Թաֆթս համալսարանի հայկական արվեստի պրոֆեսորի օգնական Քրիստինա Մարանչին, տեղեկացնում է «Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթը: «Համաշխարհային հուշարձան: Հայաստանի Զվարթնոցը եւ 7-րդ դարի պատկերազմները» թեմայով դասախոսությունը, որը 20-րդն է «Վարդանանց օրվա» դասախոսությունների շարքի, նվիրված է լինելու Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 25-ամյա փառապանծ հոբելյանին:**

**Դասախոսությունների շարքը կոնգրեսի գրադարանում հնարավոր է եղել սկզբնավորել Մարջորի Դադյանի 1991-ին կատարած առատաձեռն նվիրատվության շնորհիվ, որի նպատակն է եղել պահպանել եւ ընդլայնել գրադարանի հայկական հավաքածուն: Դասախոսությունների հովանավորն է գրադարանի Աֆրիկայի եւ Մերձավոր Արեւելքի բաժանմունքը:**

**Մարանչին վերջերս հրատարակել է «Մշտարթուն Սյուներ: Վաղ միջնադարյան Հայաստանի երեք եկեղեցիները» խորագրով հատորը, որը քննության է առնում Զվարթնոցի, Պտղնիի եւ Մրենի տաճարների շինարարությունն ու այդ ժամանակաշրջանի մշակութա-քաղաքական զարգացումները:**

**Հ. Ծ.**

## AIWA-ն նշում է իր 25-ամյակը



**«Կապ հաստատիր, ներգրավիր եւ առաջնորդիր» նշանաբանով գործունեություն ծավալող «Ամերիկայի Հայ կանանց միջազգային ասոցիացիան» (AIWA) հոկտեմբերի 1-ին Քեմբրիջի (Մասաչուսեթս) Չարլզ հյուրանոցում նշում է իր հիմնադրման 25-ամյակը: Սոցիալ-տնտեսական եւ անհատական նախաձեռնություններին միշտ աջակից կազմակերպությունը աշխարհի տարբեր անկյուններում գտնվող հայ կանանց խրախուսել է ամենատարբեր ծրագրեր իրականացնելու միջոցով: Ճաշկերույթ-պարահանդեսային միջոցառումը, ըստ «Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթի հայտարարության, վարելու է Ռոդ Այլենդից կոնգրեսի ներկայացուցիչների պալատի պատգամավոր Քեթրին Ղազարյանը: Ելույթ է ունենալու Մ. Նահանգներում ՀՀ դեսպան Գրիգոր Հովհաննիսյանը: Երեկոյի ընթացքում մրցանակների են արժանանալու կառավարման եւ հանրային ծառայությունների գծով՝ Սելինա Օզուզուն Դողանը (իրավաբան, Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր), տոկունության եւ հաստատակամության գծով՝ Հուրի Գեբեշյանը (Հայաստանը Օլիմպիական խաղերին ներկայացնող ամերիկահայ առաջին մարզուհին), նորարարական կենսունակության գծով՝ Քերոլին Գ. Մուգարը (հիմնադիր եւ գործադիր տնօրեն Հայաստանում ծառատնկման ծրագրի), ձեռնարկատիրական աշխատանքների գծով՝ Քերոլին Ռաֆայելյանը («Ալեքս եւ Անի» հիմնարկի հիմնադիր եւ գործադիր տնօրեն) եւ արվեստի ու գիտությունների գծով՝ Քեթրին Սարաֆյանը («Փիքսար» անիմացիոն ստուդիաների պրոդյուսեր):**

**Հ. Ծ.**

AZG NEW SHABAT 1.QXD 22/09/2016 21:28 Page 5



ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# 257 հոգի




Պարզ չէ, թե Ծաղկահովիտ համայնքի բնակիչներից քանի՞սն են անհամբեր սպասել, թե ե՞րբ պետք է գա իրենց գյուղապետի ընտրության օրը եւ իրենք գնան ընտրական տեղամասեր ու ընտրություն կատարեն, դրանով իսկ, եւ միայն դրանով, իրենք իրենց գյուղի, երկրի տերը զգան: Սա կարեւոր էլ չէ, կարեւորն այն է, որ շատերն անհամբեր սպասում էին Ծաղկահովիտի ընտրությունների պաշտոնական արդյունքներին, որ պարզեին` հաղթե՞լ է... Հաղթել է անկուսակցական, նախկին գյուղապետ Նորաիր Հակոբյանը, ում օգտին քվեարկել է 364 ծաղկահովիտցի, պարտվել են գործող գյուղապետ Երվանդ Խաչատրյանը, ում օգտին 311 ծաղկահովիտցու ձայն կա, եւ անազատության մեջ գտնվող Արայիկ Խանդոյանն իր 257 ձայնով:

Հենց այս 257 հոգու մասին էլ կխոսենք: Հիշո՞ւմ եք Արայիկ Խանդոյանին` Էրեբունու ՊՊԾ գնդում: Ինչ էր խոսում, ինչպես էր խոսում, ինչեր էր ասում, դե այն, որ երկրում բան փոխելու համար զինված պայքարը միակ միջոցն է, որ իրենք ընտրել են հենց միակ, միակ եւ ճիշտ միջոցը, քանի որ այսպես չի կարող շարունակվել, երկիրը թալանվում է, մարդիկ կողոպտվում են, մի խոսքով... Հետո ամեն մեկն իր ձեւով դուրս եկավ կամ բերվեց ՊՊԾ-ի տարածքից, այդ թվում` Արայիկ Խանդոյանը, ում այս պահին պահում են Նուբարաշեն ՔԿՀ-ում եւ ում դեմ կա հարուցված քրեական գործ: Հիմա, այն 257 ծաղկահովիտցիները, ովքեր գնացել են իրենց գյուղապետի ընտրություններին եւ այդ պաշտոնում ձայն տվել Արայիկ Խանդոյանին, նրան ամենեւին էլ չեն սատարել, ճիշտ հակառակը, նրան ցույց են տվել, հասկացրել են, ասել են, որ եղբայր, այնպես չէ, որ երկրում կարելի է բան փոխել միայն զինված, ավելին` զինված բան փոխելու ճանապարհը ճիշտ չէ, ճիշտը ընտրություններն են, դրանց մասնակցությունն է, այդ թվում` քո, կապ չունի ծուռ ես, դուզ ես, դա´ է: Մասնակցիր ընտրություններին եւ մենք կողքիդ ենք, չես մասնակցի, Աստված է կողքիդ է, Աստված միշտ կողքիդ է: 257 ծաղկահովիտցին իրենց ընտրությամբ չեն ապացուցում, որ ժողովուրդը Խանդոյանի եւ նրա ընկերների կողքին է եւ էր, ինչ էլ նրանք անեն, այդ մարդիկ, այդքան մարդը ցույց է տալիս, որ իրենք Խանդոյանի կողքին են, երբ նա մասնակցում է ընտրություններին, երբ նա պայքարում է անզեն, քանի որ պայքարում է երկրի ներսում, հայրենիքի մեջ, այդ հայրենիք-պետությունը շենացնելու ցանկությամբ: Իսկ հայրենիքում զենքով չեն պայքարում, դրանով էլ այն տարբերվում է:

Այս 257 հոգին շատ կարեւոր մարդիկ են, մեծագույն մեսիջով. նրանք միայն Խանդոյանին չեն ասում, բոլորին են ասում, նրանց, ովքեր զենք են վերցրել, որ երկրում բան փոխեն, ովքեր պատրաստվում են բան փոխելու համար զենք վերցնել, նրանք ասում են այս բոլորին` վայր դրեք զենքը, էլ երբեք այն չառնեք, եթե այն առնելով սահման չեք գնալու, վայր դրեք ու ընտրություններին մասնակցեք, փորձեք հաղթել, դա հնարավոր է, դա հնարավոր է դառնում:

Արայիկ Խանդոյանը ընտրություններում պարտվել է: Երեւի նա հայտարարություն տարածի, որտեղ նշի, որ ինքը պարտվել է, քանի որ իշխանություններն ինչպես միշտ, ձայներ են գողացել, բայց եթե դա այդպես լիներ, ապա իշխանությունները ձայներ կգողանային եւ իրենց թեկնածուին կտային... Ինչեւէ: Եթե անգամ գողացել են, եթե նույնիսկ դեռ շարունակում են Հայաստանում ընտրություններից ձայներ գողանալ, Արայիկ Խանդոյանի համար իր հայրենի գյուղի ընտրություններում ամենակարեւորը դա չպետք է լինի, այլ այն, որ 257 ծաղկահովիտցի կա, ովքեր նրան ընտրելով նրան ասում են` էլ երբեք զենքով բան չփոխես երկրում ու հնարավոր է, որ հենց դու դառնաս գյուղապետ: Իսկ Հայաստանի յուրաքանչյուր գյուղում 257 հոգին լուրջ թիվ է: Սա միայն մի գյուղում, այսինքն միայն մեկ գյուղում 257 հոգի կա, որոնք գտնում են, որ երկրում բան փոխելը հնարավոր է բացառապես ընտրություններով եւ առանց զենքի:

Իսկ Հայաստանում քանի՞ գյուղ կա...

# Բա հովիվներն ո՞ւր էին

Կոկիկ, մաքուր հագնված, զինվորական համազգեստը հպարտությամբ կրելով, ժպիտն ու հպարտությունը դեմքի միակ արտահայտությունը սարքած անցնում էին: Նրանք այլ կերպ չեն էլ կարող անցնել, նրանք հայոց բանակի զինվորներն են:

Ժպտալով, թաշկինակներ թափահարելով, անգամ հուզված, ոմանք նույնիսկ արտասվելով` հպարտությունից, կանգնած հետեւում էին: Իրենք այլ կերպ չեն կարող հետեւել, իրենք ՀՀ քաղաքացիներն են, որպես կանոն հետեւող, սակայն միայն հետեւող:

Վերեւում լուռ կանգնած էին, հպարտ, բայց հպարտություն չներշնչող, փողկապներից ավելի լուրջ դեմքերով: Իրենք այլ կերպ չեն կարող կանգնել, այլ կերպ եւ այլ տեղում, իրենք Հայաստանի ռազմաքաղաքական իշխանությունն են:

Ու չկային, այս տոնին, որը Անկախության է կոչվում, նրանք չկային, հայ հովիվները: Նրանք, ովքեր սահման են պահում այնտեղ, որտեղ առաջին գծում կանգնած զինվորները երկրորդ գծում են` իրենց համեմատ: Նրանք, ովքեր պե՞տք է տանկ կխփեն, պե՞տք է` անօդաչու թռչող սարք, պե՞տք է հակառակորդ, պե՞տք է գերի կվերցնեն, պետք է, պետք չէ իրենք այնտեղ են, իրենք ամենաառաջին գծում են, իրենք հայրենիք են պահում: Ու իրենք Անկախության շքերթին չկային: Այնինչ պետք է լինեին եւ առանձին գումարտակով լինեին: Հայ հովիվների գումարտակ` աշխարհում ամենաուժեղը, տարածաշրջանում ամենամարտունակը, համառը, դիպուկը, թշնամու ահուսարսափը:

Լավ կլիներ, եթե այս գումարտակը քայլեր հրապարակում այդ օրը, մենք կհիշեինք, թե ինչու, ադրբեջանցիներն էլ չեն մոռացել, թե ինչու, ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչ Մարիա Զախարովան էլ` կզարմանար, թե ինչու: Լավ կլիներ ու ճիշտ կլիներ: Հաջորդ անգամ, 26-ամյակին, կազմենք այդ գումարտակը ու թող քայլեն հրապարակում` սահմանապահների կողքին` զինվորին հավասար, նույն իրավունքներով: 27-ամյակին էլ թողեք քայլեն, 30-ին էլ, 50-ին էլ, քանի որ Ադրբեջանին տեսանելի ապագայում վերջնականապես չենք հաղթելու, 100-ին էլ: Եթե անգամ հաղթենք, էլի թող քայլեն, ոչ որպես գումարտակ, այլ որպես հովիվներ: Հովիվն անկախության հետ կապ չունի՞. զինվորի պես ունի, զինվորի չափ ունի: Ամեն տեղ ունի, որտեղ անկախություն կա, հովիվն այդ անկախության հետ կապ ունի, լինի Հայաստանում, ԱՄՆ-ում, թե Մոնղոլիայում, անկախությունն առանց հովիվ չի լինում, մանավանդ անկախությունից հետո-ն առանց հովիվ չի լինում, անկախ մնալն առանց նրանց չի լինում, ոչ մի տեղ:

Մեր անկախության օրը չկային նրանք: Հավանաբար ամաչել են, նրանք չէ, նրանց կանչելու համար: Ամաչել են` հասկանալով, որ սահմանում տեղեր կան, որտեղ նրանք ավելի հայտնի են, քան զինվորները: Բայց եթե կանչեին էլ, չէին գալու, սարերն ո՞ւմ թողնեն, իրենք սարերում են պետք, սարերն` իրենց: Ժամանակ չէին ունենա, աշխատում են, ոչխար են արածացնում- հայրենիք են պահում, թշնամու առաջխաղացում են նկատում առաջինը- հայրենիք են պահում, խոցում են թշնամու թռչող կամ չթռչող ռազմական օբյեկտներն ու- դրանով էլ հայրենիք են պահում:

Նրանք հայրենիք են պահում, նրանք զբաղված են:

Հ. ԱՖՅԱՆ

# Գիտնականները դեռ սուրճ են խմում

Չնայած Հովիկ Աբրահամյանը Կարեն Կարապետյանի ընկերն է, ինչպես վերջինս է ասել, բայց Կարեն Կարապետյանը հենց նշանակվեց վարչապետ, հայտարարեց, որ մեր տնտեսության վիճակը «շատ ծանր է»: Համաձայնեք, մի քիչ սիրուն չէ, ընկերոջ արած աշխատանքը, ջանքերը ջուրը լցնել ու հայտարարել, թե դրանք փաստորեն ոչինչ չեն տվել, ապարդյուն բաներ են եղել, իզուր արված: Մյուս կողմից, չի բացառվում, որ երբ Հովիկ Աբրահամյանն էր նշանակվում վարչապետ, մեր տնտեսության վիճակը «շատ-շատ ծանր էր», եւ Աբրահամյանին հաջողվել է բարելավել տնտեսության վիճակն ու այն Կարապետյանին հանձնել` «շատ ծանր վիճակում»: Այս տրամաբանությամբ, Կարապետյանն էլ իր հաջորդին տնտեսությունը կհանձնի «ծանր վիճակում», բայց ինչպես հասկանում ենք` սա նշանակում է, որ քանի գնում մեր տնտեսության վիճակը բարելավվում է:

Բայց սա` եթե հարցին մոտենանք լավատեսությամբ: Օրինակ որոշ հանրապետականներ վարչապետ Կարապետյանի ասած` «մեր տնտեսությունը գտնվում է շատ ծանր վիճակում» հայտարարությանը մոտենում են մի տեսակ թերահավատությամբ: Հասկանալ նրանց կարելի է, քանի որ եթե իրոք մեր տնտեսությունն այսօր ծանր վիճակում է, ուրեմն Աբրահամյանի կառավարությունը վատ է աշխատել: Եւ քանի որ Հովիկ Աբրահամյանն իր կառավարությունն իր հոր տնից չէր բերել, ինչպես ԱԺ փոխնախագահ Շարմազանովն է ասում, ուրեմն ՀՀԿ-ի կազմած կառավարությունը լավ չի աշխատել, Հանրապետականն ինքը լավ չի աշխատել, ու որպեսզի սազի տնտեսության այսօրվա վիճակի հետ` շատ ծանր է աշխատել: Հասկանալի է, ուրեմն, որ որոշ հանրապետականներ, որոնք ամեն օր, օրնիբուն, տքնաջան աշխատում են, չարչարվում են, հոգնում են, որ ժամ առաջ երկրի վիճակը բարելավեն, պետք է չհամաձայնեն այն մտքին, որ իրենք, փաստորեն, լավ չեն աշխատել:

Բայց այստեղ մեկ այլ վտանգ է ծագում: Բանն այն է, որ եթե ՀՀԿ-ն չի ընդունում իր իսկ նշանակած վարչապետի հայտարարության ճշմարտացիությունը, ուրեմն խոստովանում է, որ Կարեն Կարապետյանը տնտեսությունից բան չի հասկանում, կամ, որ սազի տնտեսության այսօրվա վիճակի հետ` շատ ծանր է հասկանում:

Առաջին հայացքից սա վտանգավոր է անձամբ Կարապետյանի համար, բայց խորքային առումով սա նշանակում է, որ ՀՀԿ-ն կրկին շատ վատ է աշխատում, քանի որ վարչապետ է նշանակում մեկին, ով տնտեսությունից շատ ծանր է հասկանում: Հետեւաբար, որպեսզի նման բարդ խնդիրների առջեւ չկանգնեն, ՀՀԿ-ի մեծամասնությունը Կարապետյանի` «շատ ծանր տնտեսություն» հայտարարությունը չլսելու է տվել, իբր չի էլ ասվել նման բան, կամ էլ եթե անգամ ասվել է, ապա «դե վարչապետ է, մի բան գիտի, որ ասում է»: Այսպես, չհաստատելով, որ տնտեսության վիճակը շատ... ծանր է եւ չխոստովանելով, որ Կարեն Կարապետյանը տնտեսությունից շատ ծանր է հասկանում:

Մի խոսքով, բոլոր այն հանրապետականները, ովքեր համաձայն չեն Կարապետյանի հետ` տնտեսությանը տված վերջինիս գնահատականի առումով, հասկանալի են, հասկանալի են նաեւ նրանք, ովքեր զգուշորեն համաձայն են, եւ հասկանալի են նրանք, ովքեր լուռ են այս կապակցությամբ: Մի քիչ անհասկանալի է Պուտինի լռությունը, քանի որ մարդը վստահ է, որ ԵՏՄ-ին միանալուց հետո Հայաստանի տնտեսությունը աճ է արձանագրել, ինչը փաստորեն այդպես չէ, բայց հազիվ թե Պուտինին զեկուցեն, թե Կարեն Կարապետյանն ինչ է ասել: Նախ նրա համար հետաքրքրական չէ, երկրորդը` ինքը սովորություն չունի խառնվելու այլ պետությունների, կոնկրետ եւ մանավանդ Հայաստանի ներքին գործերին, եւ երրորդն էլ նա, ով նման բաները զեկուցում է Պուտինին, ավելի վաղ զեկուցել էր, որ Հայաստանի տնտեսությունն աճել է, ու հիմա եթե նման բան զեկուցի, կնշանակի իր առաջին զեկույցով ՌԴ նախագահին խաբել է: Իսկ ՌԴ նախագահին անգամ Օբաման չի ցանկանա խաբել:

Բայց այս պատմությունը մի ուշագրավ կես ունի. Մեզ բոլորիս հետաքրքրում է, թե ի՞նչ են պատասխանելու Կարապետյանին, ի՞նչ ի նկատի ուներ նա, ո՞ւմ է հանելու, ո՞ւմ է թողնելու, ինքը որքա՞ն է մնալու, ձեռքի` `700 հազարանոց ժամացույցը միայն ժա՞մն է ցույց տալիս, թե՞ նաեւ տարին ու ամսաթիվը...Ու մեզ չի հետաքրքրում ամենակարեւորը` մեր տնտեսությունն իրո՞ք շատ ծանր վիճակում է, օրինակ` Գյումրիում, ինչպես քաղաքապետի թեկնածու Սամվել Բալասանյանն է պարծենում` արդեն ժամանակին աշխատավարձ են տալիս, պետեկամուտների կոմիտեն էլ սկսելու է հարկեր հավաքել` վարչապետի ցուցումով, ուսուցիչները սկսելու են դաս տալ` երբ վարչապետը նրանց ասի, վարչապետի կարգադրությամբ` լրագրողները սկսելու են հոդված գրել, նկարիչները` նկարել, քանդակագործները` քանդակել, վարսավիրները` մազ կտրել, քահանաները` աղոթել, միայն քահանաները` աղոթել, գիտնականները` ...սուրճ խմել: Այ, երբ գիտնականները սկսեցին աշխատել, բոլորս կհասկանանք, որ մեր տնտեսությունը շատ լավ վիճակում է, եւ ՊԵԿ-ին կարիք չկա ասելու, որ հարկ հավաքի, ինքն իրենույն «կփայմի»...

Հ. ԱՖՅԱՆ

AZG NEW SHABAT 1.QXD 22/09/2016 21:28 Page 6



# Նոր մոտեցում հին խնդիրներին

## *«Մարտիկյան հիմնադրամի» առաքելությունը գործողության մեջ*

ԼԵՎՈՆ ԼԱՃԻԿՅԱՆ

*Երեւանից Բերդ ձգվող ճանապարհի երկարությունն ու դրա առանձին հատվածների վտանգավորությունը կարծես փոխհատուցվում է բնության աննկարագրելի գեղեցկությամբ: Ու քեզ ակամա այն միտքն է պատում, թե այդ միջավայրում ապրողը որեւէ էական խնդիր չպիտի ունենա՝ կապված կեցության ու մարդու բնականոն գործունեության հետ: Իրականում, սակայն, այդպես չէ: Երբ մի քանի տարի առաջ Հայ առաքելական եկեղեցու ԱՄՆ Արեւելյան թեմի Հայ օգնության ֆոնդը (ՀՕՖ) սահմանամերձ Բերդում եւ դրան մերձակա գյուղական համայնքներում սկսեց ուսումնասիրություններ անցկացնել բնակչության կարիքները ճշտելու նպատակով, ի հայտ եկավ տասնամյակներով կուտակված հին խնդիրների մի մեծ բնջուկ, որի լուծման համար նոր մոտեցումներ էին անհրաժեշտ: Եվ, իհարկե, դրանք կյանքի կոչելու համար համապատասխան միջոցներ, որոնք սիրահոժար տրամադրեց «Մարտիկյան հիմնադրամը»:*



### «Մարտիկյան հիմնադրամ»

Հիմնադրվել է 1955-ին ամերիկահայ բարերարներ Էդվարդ եւ Հելեն Մարտիկյանների կողմից: Սկզբից եւեթ այն նպատակ ուներ աջակցություն ցուցաբերել բարեգործական բնույթի մշակութային, կրթական ու կրոնական տարբեր ծրագրերի իրականացմանը:

Ծնողների բարի ավանդույթները շարունակող Էդվարդ Մարտիկյան կրտսերն իր կնոջ՝ Ժանեթի հետ 2008-ին որոշեցին հիմնադրամի անունից 1մլն դոլարի նվիրատվություն անել ՀՕՖ-ի Երեխաների աջակցության կենտրոնին:

Շատերն են հիշում Գյումրու տնակային վերջին կրթօջախի՝ թիվ 6 երաժշտական դպրոցի գործարկումը 2013թ., որը Յան Գիլանի հետ համատեղ դարձյալ իրականություն դարձրեց «Մարտիկյան հիմնադրամը»: Հենց այդ ժամանակ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հետ կայացած հանդիպումից հետո էր, որ ՀՕՖ-ի Տնօրենների խորհրդի անդամ Էդվարդ Մարտիկյանը որոշեց ստանձնել նաեւ «Աղքատության հաղթահարումը Տավուշի մարզում» անունը ստացած բազմամյա ծրագիրը՝ կոչված Բերդի սահմանամերձ տարածաշրջանի գյուղական բոլոր 16 համայնքների կրթական, առողջապահական, տնտեսական ու սոցիալական խնդիրների համալիր լուծմանը:

### Հանրային առողջության բարելավում

Սա վերոհիշյալ բազմաբաղադրիչ ծրագրի առաջին, չասելու համար՝ առաջնային ուղղությունն է: Երբ տարիներ առաջ ՀՕՖ-ի հրավերով Հայաստան ժամանած Նյու Յորքի Կոլումբիայի համալսարանի Բնակչության սնուցման ինստիտուտի մասնագետները հետազոտեցին նշյալ տարածաշրջանի 0-6 տարեկան երեխաների առողջական վիճակը, հայտնաբերեցին սակավարյունության եւ թերսնուցման հետեւանք հանդիսացող այլ հիվանդությունների մտահոգիչ պատկեր: Հարկ էր մշակել եւ քայլ առ քայլ իրականացնել գործողությունների «ճանապարհային քարտեզ»: Անցել է 3 տարի ու մի քանի ամիս եւ արդեն նկատելի են առկա փոփոխությունները:

Հենց սկզբից խնդիր դրվեց նպաստել առողջ սերունդ մեծացնելու նախադրյալների ստեղծմանը: Դրա համար հարկ եղավ բարելավել մանկապարտեզներում մատուցվող սննդի բաղադրությունն ու որակը եւ արմատապես փոխել սննդակարգը: «ՀՕՖ-ի արածը հեղաշրջում էր երեխաների սնուցման հարցում,- մեր զրույցում նշեց Չինչինի հիմնանորոգված մանկապարտեզի տնօրեն **Լիլիթ Առաքելյանը**,- Նախկինում գյուղապետարանի տրամադրած գումարը հերիքում էր միայն վերմիշելին: Արդեն մի քանի տարի է, որ Հայ օգնության ֆոնդը ֆինանսավորում է որակյալ եւ թարմ սնունդը՝ բրինձ-վերմիշելը փոխարինելով մսով, կաթնամթերքով ու տեղական արտադրության պտուղ-բանջարեղենով»: Ավելի քան խոսուն են թվերը. մինչ տվյալ մանկապարտեզի նորոգումն ու կահավորումը այնտեղ կար 7 երեխա, մինչդեռ նրանց թիվն այսօր եռապատկվել է՝ հասնելով 24-ի:

Բերդում գտնվելուս օրերին ներկա եղա նաեւ Այգեձոր գյուղի մանկապարտեզի հիմնանորոգված շենքի բացման հանդիսությանը: Ինչպես գյուղապետ **Սասուն Սաֆարյանն** ասաց. «Դեռ խորհրդային տարիներից այդ շենքը նորոգության կարիք ուներ: Ու այժմ այնքան գեղեցիկ է կառուցվել, որ երեխաներն էլ չեն ուզում տուն գնալ»:

Ուշագրավ էր զրույցս Տավուշ (նախկին՝ Թովուզ) եւ հարակից 2 գյուղերի ընտանեկան բժիշկ **Ասյա Մարդանյանի** հետ: Ըստ նրա, վերջին հետազոտությունները արդեն դրական մեծ տեղաշարժ են արձանագրել նախադպրոցական երեխաների առողջության հարցում: «Այժմ սննդի հագեցվածությունն այլեւս ամբողջական է,- նշեց բժշկուհին՝ շարունակելով,- ՀՕՖ-ը նպաստում է նաեւ շրջանի բուժանձնակազմի վերապատրաստմանը, ծանոթացնում բժշկագիտության բնագավառում նորագույն տեխնոլոգիաներին, նաեւ մեզ մասնակից դարձնում միջազգային համաժողովներին»: Երեք տարում բժշկական անհրաժեշտ սարքավորումներով ու պարագաներով վերազինվել են գյուղական գրեթե բոլոր բուժկետերը, մի մասն էլ՝ նորոգվել ամբողջությամբ:

Տեղեկացանք, որ ծրագրի շրջանակներում մեծ շեշտ է դրվում նաեւ չափահաս բնակչության, ի մասնավորի՝ երիտասարդ մայրերի իրազեկվածության բարձրացման վրա: Դրա համար շատ գյուղերում առանձնացվել ու կահավորվել են «Մայրական դասարաններ», տպագրվել տեղեկատվական գրքույկներ եւ այլն:

### Ուսուցում եւ կրթության բարելավում

Այցս մի քանի գյուղական համայնքների դպրոցներ պարզեց, թե ի՜նչ ավերներ են գործել աղքատությունն ու դրա անմիջական հետեւանք հանդիսացող արտագաղթը: Այսպես. եթե Մովսես գյուղի դպրոցը նախկինում ունեցել է շուրջ 1200 աշակերտ, ապա ներկայումս այն ունի ընդամենը 115-ը: Սպառնալից է առաջին դասարան հաճախող երեխաների թվի նվազումը. Ն. Կարմիր աղբյուրում՝ 4 աշակերտ, Այգեպարում՝ 2 եւ այլն: Իսկ Չինչին գյուղի միջնակարգ դպրոցը, որը ժամանակին ունեցել է 300-400 աշակերտ, այս ուսումնական տարում կրթություն է ապահովում ընդամենը 40 երեխայի: Այստեղ առաջին դասարանն ունի 4 աշակերտ: Տնօրեն **Արփիկ Զուլհակյանի** հետ շրջելով դպրոցում՝ տխրությամբ ականատես եղա առանձին դասարանների հարկադիր միավորման, որի հետեւանքով կազմակերպվել էր երկհամակազմ ուսուցում: Միաժամանակ ցնծություն ապրեցի, երբ տեսա ՀՕՖ-ի նորոգած մարզադահլիճը, համակարգչային ու արհեստների դասասենյակներն իրենց գույքով:

Այս կերպ ոչ միայն ստեղծվում է կրթության պատշաճ միջավայր, այլեւ ընդլայնվում է սովորողների աշխարհայացքը, նրանց տրվում հետագա կյանքի անհրաժեշտ հմտություններ: Վերջին տարիներին 2 տասնյակ արտադասարանական խմբակներ են կազմավորվել շրջանի դպրոցներում՝ դրանք հագեցնելով գույքով ու գործիքներով: Դպրոցականների ֆիզիկական ու ռազմահայրենասիրական դաստիարակության շրջանակներում ստեղծվել է 2 հրաձգարան, նորոգվել 12 խաղահրապարակ եւ 5 սպորտդահլիճ: Էլ չենք խոսում դպրոցական սանհանգույցների եւ ճաշարանների նորոգության մասին: Վերջիններս կոչված են ապահովել տարրական դասարանների աշակերտության առողջարար սննդի շարունակականությունը:

«Մարտիկյան կրթավճար» ծրագրով վճարվում է մայրաքաղաքում եւ այլուր բարձրագույն կրթություն ստացող շուրջ 4 տասնյակ պարման-պարմանուհիների ուսման վարձը, շատերի էլ տրանսպորտային ծախսերն է փոխհատուցվում: Ու այս ամենի արդյունքում շրջանում կամաց-կամաց աշխուժանում է երիտասարդական կյանքը: Երիտասարդական հավաքները գլխավորապես մի նպատակ են հետապնդում. պատանիներին ու աղջիկներին մասնակից դարձնել համայնքային խնդիրների լուծմանը:

### Համայնքի տնտեսական զարգացում

Դառն իրողությունն այն է, որ խորհրդային կարգերի փլուզումից հետո Բերդի տարածաշրջանում հատուկենտ ձեռնարկություններ են գործում՝ սակավաթիվ աշխատատեղերով: Ինչպես մեր ողջ երկրում, այստեղ եւս թիվ 1 խնդիրը աշխատատեղերի բացակայությունն է. տղամարդիկ հիմնականում պայմանագրային զինծառայողներ են, իսկ կանայք՝ տնային տնտեսուհիներ: Կիսալեռնային հողը, ըստ տեղացիների, այնքան էլ եկամտաբեր չէ: Սրան գումարվում է գյուղտեխնիկայի պակասը, չասելու համար՝ բացակայությունը, պարարտանյութերի բարձր գները եւ այլն: Այս ամենի հետեւանքով գյուղացին աստիճանաբար հեռանում է հողից:

Նման վտանգավոր զարգացման դեմն առնելու համար ՀՕՖ-ը հետեւողականորեն գործադրում է բարեգործական ծրագրի տնտեսական բաղադրիչը, որի գլխավոր նպատակը հողի հանդեպ վերաբերմունքի փոփոխությունն է, ինքնաբավ համայնքի ստեղծումը: Դրա համար կատարվում է գյուղտեխնիկայի համալրում, ենթակառուցվածքների վերականգնում եւ ընտանեկան ձեռներեցության խրախուսում: ՀՕՖ-ն, օրինակ, Գյուղատնտեսության նախարարության ԾԻԳ-ի եւ «Պոզիտիվ Պլանետ» կազմակերպության հետ համատեղ արդեն աջակցել է գյուղական բոլոր համայնքներին 23 տրակտոր ու հարակից սարքեր ձեռք բերելու եւ այգեգործական կոոպերատիվներ կազմավորելու հարցերում, իսկ 6 համայնքներում համաֆինանսավորել է խմելու ջրագծերի անցկացումը:

Տպավորիչ արդյունք է տալիս իսրայելական արտադրության ջերմոցների տրամադրումը անհատ ձեռներեցներին, որով արմատապես փոխվում է մարդու, տվյալ դեպքում՝ ընտանիքի կյանքը, իսկ գյուղում մնալը դառնում է գրավիչ: Բերդի թիվ 3 հիմնական դպրոցի կենսաբանության ուսուցչուհի **Արեւ Ներսիսյանը** մեկն է ծրագրի շահառուներից: Նրան տեսա սեփական ջերմոցում լոլիկի առատ բերք հավաքելիս: «Իմ տեսական գիտելիքներն ուզեցի գործնականի վերածել,- պատմեց նա,- Գերագույն հաճույք եմ ստանում աշխատանքից: Ինչ անում եմ ընտանիքիս ու 3 զավակներիս համար եմ անում, որպեսզի էկոլոգիապես մաքուր սնունդ ունենան»: Ուրախ էր իհարկե, որ իր զավակների բարեկեցիկ ապագան ապահովելու ճանապարհն է բռնել:

Ավելացնենք, որ նմանօրինակ արդեն 11 ջերմոց է տրամադրվել ձեռներեց տավուշցիներին:

### Ընտանիքների կայունացում

Սա արդեն գործադրվող բարեգործական ծրագրի չորրորդ բաղադրիչն է, որ ենթադրում է Բերդի տարածաշրջանի անապահով բնակչության կենսամակարդակի բարձրացում: ՀՕՖ-ի Բերդի գրասենյակի 14 աշխատակիցները, գլխավորությամբ **Լուսինե Գրիգորյանի**, ամենօրյա կապի մեջ են 3 եւ ավելի անչափահաս երեխաներ ունեցող շուրջ 360 ընտանիքների հետ: Կատարելով նրանց առաջնային կարիքների վերհանում ու գնահատում՝ աջակցություն է ցուցաբերվում ամենատարբեր միջոցներով. սերմացուից, մեղվափեթակներից, հավերից ու այլ ընտանի կենդանիներից սկսած մինչեւ վարսահարդարման ու այլ գործիքների տրամադրում: «Աջակցություն փոքր բիզնեսին» կարգախոսով էլ մեծ ուշադրություն է դարձվում կանանց զբաղվածության հարցերին եւ ընդհանրապես նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Ուշագրավն այն է նաեւ, որ «Աղքատության հաղթահարումը Տավուշի մարզում» ծրագրի շրջանակներում չի շրջանցվում հասարակության եւ ոչ մի շերտ, տարիքային որեւէ խումբ: Բերդում գործող «Ցերեկային կենտրոն» է հաճախում 45 երեխա ողջ տարածաշրջանից, իսկ այդտեղ բացված բարեգործական ճաշարանը սպասարկում է 120 տարեցների:

Անշուշտ, այս հաջողությունները հնարավոր են դառնում շնորհիվ համայնքային, պետական ու ոչ կառավարական, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցության:

**...Հրաժեշտից առաջ տեղի ունեցած մեր հանդիպման ժամանակ Բերդի հոգեւոր հովիվ *Տեր Արամ քհն. Միրզոյանը* օրհնաբեր համարեց «Մարտիկյան հիմնադրամի» եւ Հայ օգնության ֆոնդի մուտքը իրենց տարածաշրջան: Ըստ նրա, բարեգործական այս ծրագրի իրականացման նախընթաց շրջանն արդեն տվել է իր շոշափելի օգուտը. զգալիորեն աճել է ծնելիությունը եւ նվազել արտագաղթողների թիվը: Սա այն դեպքում, երբ «Մարտիկյան հիմնադրամի» առաքելությունը տակավին գործողության մեջ է:**

# Եղիկ Ջերեջյանի «Մեծն Մուրադ» ուսումնասիրությունը

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

IX դարի երկրորդ կեսին սկսված հայոց վերազարթոնքն աստիճանաբար վերաճեց ազգային-ազատագրական պայքարի, որն անցել է զարգացման մի քանի փուլեր. ա) հայրենիքից դուրս գործող անհատ մտավորականների գործունեության արդյունքում ձեւավորվեց լուսավորյալ նոր սերունդ, որը երկնեց ազատագրական պայքարի գաղափարախոսությունը, բ) տեղի ունեցավ դեպի Երկիր այդ գաղափարախոսության տեղափոխում՝ Ազգային սահմանադրության համար մղվող պայքարի տեսքով, գ) ավելի ուշ երկրի տարբեր մասերում ձեւավորվեցին նաեւ ազատագրական խմբակներն ու քաղաքական կուսակցությունները: Ազատագրական պայքարի խանձարուր Ազգային սահմանադրության համար սկսված շարժումն աստիճանաբար ծավալվեց եւ դրսեւորվեց նաեւ զինված՝ ֆիդայական պայքարի տեսքով: Աստիճանաբար ծավալվելով՝ այն իր մեջ ներառավ Արեւմտյան Հայաստանի բոլոր գավառներն ու Օսմանյան կայսրության հայաշատ տարածքները: Հաճախ դիպվածի կամ որեւէ անարդար իրադարձության արդյունքում առաջացած այդ հատվածական պոռթկումների մասնակիցներն հետագայում համախմբվում էին, քննարկում ու ծրագրում իրենց անելիքները: Արդյունքում անհատական կամ միմյանցից առանձին-առանձին գործող խմբերն սկսեցին համագործակցել, իսկ կուսակցությունների ասպարեզ իջնելուց հետո՝ նաեւ կենտրոններից ղեկավարվել:

XIX դարի 80-ական թթ. սկսված եւ աստիճանաբար թափ հավաքող ֆիդայական պայքարին մասնակցում կամ սատարում էր ժողովրդի զգալի մասը, ինչի արդյունքում այն միտում ուներ վերածվելու համաժողովրդական շարժման, սակայն իրադարձությունների ոչ նպաստավոր զարգացումների արդյունքում՝ չդառնալով այդպիսին, 1907-1908 թթ. այն աստիճանաբար մարեց: Այդ պայքար-շարժումն իր բնույթով պարտիզանական էր՝ նման XV-XIX դարերում օսմանյան նվաճողների դեմ բալկանյան ժողովուրդների հայդուկային պայքարին: «Հեղափոխություն» անվանված արեւմտահայ ազգային-ազատագրական շարժումը, որն իր հորձանուտի մեջ ներառավ հայության բոլոր հատվածները, իր գոյության իրավունքն աշխարհից պահանջելու առումով յուրակերպ փորձաքար դարձավ ողջ հայության համար: Այդ շարժման փայլուն էջերից մեկը հանդիսացող ֆիդայական պայքարն ուներ սոցիալական բովանդակություն եւ իր սուր ծայրով ուղղված էր բոլոր տեսակի ճնշողների եւ բռնակալների դեմ: Իսկ իբրեւ ճնշող եւ բռնակալ հանդես էին գալիս քուրդ ռազմական ավագանին՝ ցեղապետերն ու թուրք պաշտոնեությունը: Վրիժառու հայդուկի զենքն անհրաժեշտության դեպքում ուղղվում էր նաեւ հայ մատնիչների դեմ:

Ֆիդայական պայքարը նպաստեց հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության բարձրացմանը եւ հանգեցրեց ինքնապաշտպանության կազմակերպման գաղափարին: Սրբազան այդ պայքարի ընթացքում բազմաթիվ խիզախ վրիժառուներ նահատակվեցին եւ իրենց սխրանքներով անմահացան: Սակայն նրանք ապացուցեցին, որ ավելի լավ է պատվով ու հերոսաբար նահատակվել, քան քարշ տալ խղճուկ, ստրկական գոյություն:

Հայ ժողովրդի հերոսական այդ պայքարի մասին ինչպես Հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում զգալի քանակությամբ ուսումնասիրություններ են գրվել: Համոզված եմ, որ դեռ շատ է գրվելու, քանի որ շարժման ռազմավարության, մարտավարության, մասնակիցների քանակի, սոցիալական կազմի, նրանց մղած տարբեր տրամաչափերի կռիվների, զենք-զինատեսակների, մատակարարման, ժողովրդի վերաբերմունքի եւ շատ այլ հարցեր դեռեւս կարոտ են ամբողջական լուսաբանման, ինչպես նաեւ դրանց վերաբերյալ առկա տարակարծությունների հստակեցման:

❖❖❖

**Եղիկ Ջերեջյանի** (2) հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման ամենահերոսական ու դրամատիկ էջի՝ ֆիդայական պայքարի դյուցազն **Համբարձում Պոյաջյանին** նվիրված սույն ուսումնասիրությունը ասվածի առհատչյան է: Հ. Պոյաջյանը (Մեծն Մուրադ) այն անձն էր, որ իր ողջ կյանքը նվիրաբերեց հայ ժողովրդի ազատագրական պայքարին: Մարդ, ում անունն ու գործը ուսանելի դպրոց է, անվեհեր մաքառումի եւ անկոտրում կամքի արտահայտություն: Միջահասակ, սեւ փոքրիկ մորուքով, սեւ գեղեցիկ աչքերով, շատ մեղմ հայեացքով ու մեղմ ձայնով, բայց միշտ ոգեւորված խոսող Մուրադը մի քանի տարի անցել է թուրքական բանտերի եւ աքսորի քավարանով, դատապարտվել 101 տարով բանտարգելության, մահապատժի, սակայն երբեք չի զղջացել ու չի ընկրկել անմարդկային կտտանքներից եւ ամեն անգամ պատվով է դուրս եկել այդ փորձություններից: 1890 թ. Գում Գափուի ցույցի գործուն մասնակիցը, 1894 թ. Սասունի ապստամբապետն ու ղեկավարը, ում մասին նյութեր են հրապարակել այնպիսի հեղինակավոր պարբերականներ, ինչպիսիք էին «New York Times», «Journal Times», «New York World», «The Boston Globe» եւ ուրիշներ, երբեք չտարվեց կուսակցամոլությամբ եւ մշտապես եղավ ու մնաց համագործակցության, համերաշխության եւ կայուն միասնության ջատագով:




Բարեխիղճ ուսումնասիրող է հեղինակը: Էջ առ էջ թերթելով եւ ընթերցողի ուշադրությանը ներկայացնելով Մուրադի 55-ամյա կյանքի պատմությունը՝ Ջերեջյանը բծախնդիր մոտեցմամբ եւ գիտական պատշաճության եւ անկողմնակալության բոլոր տարրերի պահպանումով է ներկայացնում իր հերոսին՝ առանց տուրք տալու մեզանում ոչ հազվադեպ հանդիպող կուսակցականությանը: Աշխատանքն առանձնանում է նաեւ փաստահարուստ հենքով: Առանց ընդգծելու դրանք հայթայթելու դժվարություններն ու կատարած տքնաջան աշխատանքը, հեղինակը դրանք վկայակոչում է քննախույզ հետազոտողին վայել կեցվածքով ու նրբորեն: Հաճախ որեւէ խնդրահարույց հարց պարզաբանում է այնքան սահուն, որ եթե համաձայն էլ չէ որեւէ հեղինակի հայտնած տեսակետին, ապա դա անում է իսկական մտավորականին վայել ազնվական վեհանձնությամբ:

Նորություններով հարուստ այս ուսումնասիրությունն առանձնանում է նաեւ ոչ միայն մեծաքանակ, այլեւ բազմաշերտ աղբյուրային հենքով: Հեղինակը պրոֆեսիոնալին վայել եւ սրտացավ աշխատանքով կարողացել է վարպետորեն համադրել հայաստանյան եւ սփյուռքյան տարբեր արխիվների նյութերը, թեմային առնչվող տպագիր սկզբնաղբյուրներն ու մամուլը: Նկատելի է, որ յուրաքանչյուր փաստի, վկայության կամ հուշագրության՝ հեղինակը վերաբերվել է բծախնդիր քննական մոտեցմամբ, որի արդյունքում նրան հաջողվել է ձերբազատվել Մուրադի հերոսական կերպարի լուսապսակի ազդեցությունից եւ վեր հանել նրա իրական, մարդկային կերպարը: Ներկայացնել այն տառապալից եւ հերոսական կենսագրությունը, որի գիտակցական 37 տարիներից 13-ն անցել են թուրքական գեհենում:

Համոզիչ եւ փաստարկված է հեղինակի խոսքը. փախստական, աքսորական թե թափառաշրջիկ, խորունկ հավատով եւ անմնացորդ նվիրումով, հպարտ եւ `վեհերոտ կարծուելու չափ համեստ՛ Մուրադն իր ողջ կյանքը նվիրաբերեց սեփական ժողովրդի փրկության սրբազան գործին՝ դառնալով հայ իրականության մեջ այն փոքրաթիվ հերոսներից, որոնք կենդանության ժամանակ գնահատվեցին ու մեծարվեցին: Եզակիներից, ով երիտասարդ տարիքում արդեն արժանացավ ժողովրդի անմնացորդ սիրուն, «առասպելական ըլլալու աստիճան հերոս»-ի լուսապսակ-բնորոշմանը: Հիրավի, Մուրադի ապրած կյանքը ուսանելի շատ կողմեր ունի, դրանով սերունդներ են դաստիարակվել: Իսկ մեր օրերում, երբ մատաղ սերնդին իրական հերոսներ են անհրաժեշտ, երբ ազգիս նետված են շատ մարտահրավերներ, դրանց դիմակայելու եւ հաղթանակած դուրս գալու համար այսպիսի աշխատությունները թե՛ գիտական, թե՛ կիրառական տեսակետից խիստ անհրաժեշտ են: Այնպես որ, ճիշտ տեղին ու ժամանակին է կատարված այս աշխատանքը, որի համար պատմաբանիս դիրքերից շնորհակալություն եմ հայտնում այս լավ ու շնորհակալ աշխատանքի համար, որն անկասկած կլրացնի ֆիդայական պայքարի մասին հաջողված ուսումնասիրությունների շարքը: Իսկ որպես ընկեր ու բարեկամ, հեղինակին մաղթում եմ հետագայում եւս արգասաբեր գործունեություն եւ, ինչպես սփյուռքում է ընդունված է այսպիսի դեպքերում ասել՝ վարձքդ կատար:

**10-18.09.2016 Երեւան**

*(1) Ճէրէճեան Եղիկ, Մեծն Մուրատ (Համբարձում Պոյաճեան), ՀՐԱՍԻՐՏՆԵՐԸ Մատենաշար-թիւ 1, Երեւան, 2016, 248 էջ:*

*(2) Ճերեճյանը հեղինակ է «Արիւնոտ Գայերթի Վկաներ» (1989), «Հայկական Ցեղասպանութիւնը Ճիչ Մըն է Մարդկութեան Խղճին Դէմ» (1995 արաբերէն), «Փանթուրանիզմը» (1998), «Պանդուխտ» (1999), «1912-ի Օսմանեան Երեսփոխանական Ընտրութիւնները Եւ Արեւմտահայութիւնը» (2007), «Յաւերժի Ճամբու Կերտիչներէն» (2014):*

# Անկախության օրը, ռուսների հետ

**Ռուսները զենքը բերել են: Ռուսների համար մենք այն բացառիկ պետությունն ենք, ավելի ճիշտ՝ ժողովուրդը (քանի որ ռուսների համար մենք ոչ այնքան պետություն ենք, որքան՝ ժողովուրդ), որ ոչ թե ուղարկել են, այլ անձամբ են բերել, որ հասցնեն, որ Անկախության 25-րդ ամյակի ռազմական շքերթին Հանրապետության հրապարակով անցնի, ռուսական զենքը, հայ զինվորը, բայց ռուսական զենքը, արդարության համար՝ աշխարհի ամենաուժեղ զենքը: Այդ օրվա շքերթին ռուսական դրոշ էլ եղավ Հանրապետության հրապարակում, բնական է. մենք անկախացել ենք ռուսներից, որոնք մեր զինված ուժերի հետ ապահովում են մեր անկախությունն ու տարածքային ամբողջականությունը, նաեւ անվտանգությունը: Արդեն 25 տարի, եղբայրաբար, սիրով, հավասարը՝ հավասարի սկզբունքով, էժան զենք տալով, վարկով զենք տալով, մի խոսքով՝ ռուսական դրոշը, երբ մեր Անկախության տոնին ծածանվեց հրապարակում, մի նեղացեք անկախությունից, մի հիշեք անկախանալու օրերը, անկախություն չտվողի անունը, ոչինչ մի հիշեք, հին ազգերի մոտ չհիշելը վերանալու պես բարդ է, բայց հիշելն էլ՝ առաջ չգնալու շարժառիթն է, պատճառը, հիմքը:**




**Ինչեւէ, զենքն արդեն այստեղ է, այն մերն է, ում վրա ուզենք՝ կկրակենք, կուզենք Ադրբեջանի վրա կկրակենք, կուզենք... Չէ, այդ մեկը եկեք չուզենք, սեփական ժողովրդի վրա եկեք էլ չկրակենք, 25 տարեկան լուրջ մարդ ենք, արդեն մենք մեր զենքը պետք է ունենայինք, բայց քանի Ռուսաստանը զենք ունի, մեր ինչի՞ն է պետք զենք ունենալը, մերը՝ ռուսներինը, ինչ տարբերություն...Ու ո՞նց են հրճվում, ոնց ենք հրճվում, զենք տեսնելուց, իբր վերջ, ավարտվեց, էլ մեզ ոչ ոք չի հաղթելու, հեկտար-հեկտար մեր հողերով առաջ չեն գալու, մեր տղերքի փամփուշտները չեն ավարտվելու՝ կյանքերից շուտ, արդեն լիքը ունենք՝ փամփուշտ: Մարդիկ, բայց զենքից ուրախանո՞ւմ են, օրինակ, երբ դուք մեկի ձեռքին զենք եք տեսնում, ուրախանում ե՞ք, ես որ վախենում եմ, վախենում եմ, քանի որ եթե մարդը զենք ունի, ուրեմն կարող է կրակել, եթե կարող է կրակել, կարող է սպանել, եթե կարող է սպանել, ուրեմն պոտենցիալ մարդասպան է, դուք մարդասպանից չե՞ք վախենում, թեկուզ պոտենցիալ: Ես վախենում եմ, զինված պետությունից էլ, անկախ նրանից զենքը ռուսական է, ամերիկյան, գերմանական, թե չինական՝ անորակ: Պետությունը տուրիզմն ու հյուրանոցային բիզնեսը զարգացնելու համար չի զինվում, տնտեսությունն ու կրթությունը զարգացնելու համար չի զինվում, սեփական ժողովրդի բարեկեցությունն ապահովելու համար չի զինվում, զինվում է, քանի որ կա՛մ կյանքի գնով չի տալու, կա՛մ կյանքի գնով խլելու է: Մենք կյանքի գնով չտվող պետություններից ենք, ու դա, մարդիկ, սարսափելի է: Նորմալ է, ճիշտ է, գուցե միակ ճիշտն է, բայց դա սարսափելի է: Սարսափելի է, քանի որ մենք չենք խլողը, որ մի օր որոշենք է՛լ չխլել, մենք չտվողն ենք, իսկ չտվողից չեն հարցնում՝ տալի՞ս ես, թե՞ ոչ, խլում են, փորձում են, մինչեւ ստացվի, առանց հարցնելու՝ կարելի՞ է, ուզո՞ւմ ես, պատրա՞ստ ես ...**

**Ռուսները զենքը բերել են, կյանքի գնով էլ լինի՝ չենք տալու, ռուսները նրանց էլ են զենք տանում, նրանք էլ կյանքի գնով էլ լինի՝ խլելու են: Մեծ ու փոքր պետությունները հենց սրանով են տարբերվում. փոքրերը կա՛մ խլող են, կա՛մ չտվող, մեծերը միշտ մի տեսակ են՝ խլողներին օգնում են, որ խլեն, չտվողներին օգնում են, որ չտան: Հենց որ չտվողին հաջողվեց վերջնականապես չտալ, դառնում է մեծ պետություն, հենց խլողին հաջողվեց վերջնականապես խլել՝ ինքն է դառնում մեծ պետություն: Իսկ աշխարհում որքան շատ լինեն մեծ պետությունները, այնքան թույլ կլինեն դրանք:**

**Ամեն դեպքում զենքով հրճվելը, կամ կոնկրետ՝ ռուսական զենքով հրճվելը ճաշակի հարց է, երկրորդն անգամ քաղաքական նախասիրությունների հարց է, այլ քաղաքական նախասիրություններ ունեցողների հետ վերեւից խոսելու հիմք՝ թե բա տեսե՞ք, «ձեր Ամերիկան չի տալիս», իսկ «մեր Ռուսաստանը», որը միշտ ու ամեն հարցում մեր կողքին է, տալիս է:**

**Անկախության քսանհինգամյակն է, պարոնայք, ու թող, որ ձեր կողքին միշտ լինեն նրանք, որոնց ուզում եք տեսնել ձեր կողքին:**

**Հ. ԱՓՅԱՆ**

ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ

*Սկիզբը՝ նախորդ համարներում*

❖❖❖

Ինչքան էլ զարմանալի թվա, խորովածի ծուխը մշտապես ինձ ուղեկցել է Լոս Անջելեսում: Թե՛ Հայաստանից գնացածները, օրինակ՝ Հենրիկ Շահապունը եւ նրա կինը՝ Ադիկը, մորաքրոջս որդին՝ Մուկուչը եւ նրա կինը՝ Կարինեն, թե՛, օրինակ, իմ պարսկահայ ընկերներ Ռուզան ու Ժանետ Քոյլանյանները, իմ հոգուն հարազատ բարեկամներ Առլետա եւ Համրիկ Շիրինյանները, Մարի-Ռոզն ու Արմենը... այդպես կարող եմ թվարկել համարյա իմ բոլոր ընկերներին, քանի որ ինչ տան այգի կամ բակ մտնում էինք՝ մանղալը միշտ գործի դրվեր: Համբիկենք, օրինակ, ինչպես եւ Մուկուչը, առանձնապես սիրում էին հյուրասիրել տառեխի խորովածով: Ինչպես կասեր լուսահոգի դրամատուրգ Արարատ Բարսեղյանը («Արմենիայի» վարպետաց սեղանին) «Ասատրինայի խորոված». պարզվում է, որ դա եղել է մեծ դերասան Հովհաննես Աբելյանի ամենասիրելի ուտեստը: Խորովածի ծուխը, թող ներեն ինձ ընթերցողներս նոստալգիկ համեմատության համար, ինձ ու թերեւս ինձ հյուրասիրողներին փոխադրում էր հայրենիք, օրինակ հիշեցնում, թե ինչպես նույն Մուկուչը իր հոր՝ հայտնի ատամնաբույժ Ժորայի հետ Իջեւանի ձորում խորովածի պատրաստություն էին տեսնում, իսկ բաստուրման իր իմացած ձեւով (չորացրած ուրցով) դրել էր մայրս՝ Բելլան, կամ խորոված էինք անում նույն Առլետայի եւ Համբիկի հետ արդեն մեր հարազատ հողի վրա՝ Սեւանի նշանավոր Հայրավանքի տակը, լիճը տանող ճամփի մամռոտ ժայռերի արանքում.... Խորովածի ծուխը բնականաբար ունի իր յուրահատուկ հոտը, որն իր հերթին կախում ունի, թե ինչ տրամադրությամբ ես այն անում, եւ ինչ ընկերների հետ՝ հին ու հավասարի՞մ, թե՞ գործի բերումով՝ պաշտոնական: Կախում ուներ անգամ, թե ինչից ես խորովածի կրակն անում՝ արհեստական ածուխի՞ց, թե՞ խաղողի արկատից...

Մարդկության ամենահին կերակրատեսակն է խորովածը, երեւի դրա համար էլ մենք հայերս շատ ենք սիրում, սիրել են թե՛ մեր պապերը, թե՛ նախապապերը... Այնպես որ, երբ Ամերիկայում առնեք խորովածի ծխի հոտը, կարող եք անսխալ ասել, որ հայ մարդը ձեզնից հեռու չէ... Հապա լավաշը... քանի՜ տեսակ լավաշներով կարող է քեզ հյուրասիրել հայկական «Ջոնս» սուպերմարկետը, որ նույնպես մեր երկրացի Հովիկի շնորհքի վկայությունն է. կարմիր ցորենի, ճերմակ (հայկական Շիրակի) ցորենի, քարի (թոնրի վրա), եգիպտացորենի ալյուրից, անուններն էլ յուրահատուկ են՝ լավաշ Հակոբի, Մշո լավաշ, Քարի հաց, Գառնիի տաճարի նկարով, եւ իհարկե՝ «Նոյյան Տապանի» հաց...

Ընդհանրապես հայկական խանութների, սուպերմարկետների, անուշեղենի, թխվածքների սալոնները, փռերը, խոհանոցները, պատվերով խորովածարանները, խաշատները, հարիսանոցները, քյաբաբանոցները այնքան շատ են սփռված ողջ Կալիֆոռնիայով, որ քեզ կարող է թվալ, թե հայկական խոհանոցը փոխադրվել է օվկիանոսի այս ափը: Ինչ որ կուզես՝ գոմեշի մածուն, խնդրեմ, Քյավառի փախլավա կամ գաթա՝ խնդրե՛մ, Գյումրվա քյալլա կամ շաքարաբլիթ (յաղլի)՝ խնդրե՛մ, միայն բաստուրման ես հաշվեցի «Ջոնս» սուպերմարկետում յոթը տեսակի... Ընդհանրապես 1992 թվականի դեկտեմբերին ինձ մոտ այնպիսի տպավորություն էր, որ ես ընկել եմ Լուկուլլոսի մոտ քեֆի...

Ամերիկահայերը սովորություն ունեն իրենց հյուր հայրենակցին կա՛մ իրենց տուն հրավիրել, կա՛մ որեւիցե ռեստորան: Իհարկե, ավելի նախընտրում են հայկական ռեստորան: 1992 թվականին դրանք հինգն էին՝ ամենամեծը՝ «Արբատը», «Կարուսելը»՝ ճիշտ Գլենդեյլի կենտրոնում, «Մասիսը»՝ Հոլիվուդում, «Գյումրին»՝ Փասադենայում, «Հայկական խոհանոցը» Մոնթեբելլոյում: Ամենահայտնին «Արբատն» էր, երկու սրահներով, մեծում հարսանիքներ էին անում: «Արբատը» երկու խոհանոց ուներ՝ հայկական, որ շատ բաներով հիշեցնում էր ասենք Երեւանի «Արմենիա» ռեստորանի խոհանոցը, եւ ռուսական, որն իր հերթին հիշեցնում էր ռուսաց մայրաքաղաքի «Մոսկվա» հյուրանոցի ռեստորանը: Մանավանդ, որ այնտեղ երգում էր այդ տարիներին մեծ համբավ ունեցող, ազգությամբ ռուսաստանյան հրեա Միխայիլ Շուֆուտինսկին:

# «ԵՐԹԱԼԸ ՃԻՇՏ Է....»

## *(Ենթախորագրի փոխարէն՝ հարցական նշան)*

Նա ծնվել էր Օդեսայում, մինչ գորբաչովյան տարիներին երգել Մոսկվայի տարբեր բեմերում, հետո արտագաղթել Լոս Անջելես եւ աշխատանք գտել նախկին երեւանցի՝ Ավետիսի որդիներին պատկանող այդ համբավավոր ռեստորանում:

Մայրիկիս մորաքրոջ զարմուհին՝ Տիգրանուհին (Դիանան), մի զարմանալի անհատականություն, որը նույնպես ծնվել էր Օդեսայում, պոլսեցի կոշկակար Հարություն Պարոնյանի ընտանիքում, հրաշալի գիտեր ռուսերեն, եւ Շուֆուտինսկու հետ, որպես ռուսական էմիգրանտ, ընկերություն էր անում: Նրանք համբուրվեցին, հին ծանոթներ էին.

-Здравствуй, Мишенька, как я рада здесь видеть тебя.

-А я как рад, ведь мы с тобой и не русские, и не армяне, и даже не евреи. Мы с тобой одесситы.

-У нас сегодня здесь армянская свадьба - один из племянников моего мужа женится.

-На ком Диночка?

-Ты же знаешь - армяне стараются только на своих жениться.

-Ну я поздравляю.

-Мишенька, обещай что сегодня вечером ты споешь мою любимую песню про белого лебедя.

-Как же, обещаю, Диночка.

Հետո Շուֆուտինսկին նայեց ինձ ու ասաց.

-Еслиб вы, молодой человек, видели Диночку лет 20 назад, вы бы упали.

Ես շատ ուրախացա նման խոսքեր լսելու իմ իսկապես գեղեցկուհի թանթիկի հասցեին:

Ահա այսպիսի սրտամոտ զրույցի ես ակամա վկա եղա՝ հայուհու եւ հրեայի միջեւ, իրոք կյանք տեսած եւ իրենց փորձը կյանքով հաստատած երկու անձանց միջեւ:

Շուֆուտինսկին այդ գիշեր իսկապես երգեց եւ իր կողմից ասաց.

-Здесь в зале на армянской свадьбе присутсвует и моя сестра из Одессы — Дина. Я эту песню посвящаю ей и вместе с ней всем армянам и евреям мира. Ведь у них очень схожие судьбы.

Բոլորը ծափահարեցին ու համարյա բոլորն անցան պարի: Եվ ես պարի հրավիրեցի թանթիկիս դուստր ընկերուհուն, մի շատ համակրելի տիկնոջ՝ ծագումով Հալեպից Լյուսի Յաղուբյանին, հետագա տարիներին մենք հավասարիմ բարեկամներ դարձանք: Շուֆուտինսկին, իրոք, սրտանց էր երգում, շատերը խոսում էին ռուսերեն: Օդին էլ ռուսական էր: Ես առաջին մի քանի րոպեն չհասկացա Մոսկվայու՞մ եմ գտնվում, թե՞ Լոս Անջելեսում: Դե ինչ արած, այս մարդիկ՝ հայեր, ռուսներ, հրեաներ, բուլղարներ, ուկրաինացիներ, ժամանակին որոշել էին. «Երթալը ճիշտ է»: Սա էլ, երեւի, գլոբալիզմի պտուղներն են:

❖❖❖

Ընդհանրապես այնպես է կառուցված կամ այնպես է իրականությունը դասավորված, որ շատ հաճախ Լոս Անջելեսում շփոթում ես, թե իրապես ո՞ւր ես գտնվում... Սա էլ երեւի մեր՝ հայերիս յուրահատուկ շնորհքն է՝ 17 միլիոնանոց Լոս Անջելեսում կառուցել մի հայկական փոքր Հայաստան («Little Armenia»): Չարժե մեկ առ մեկ թվարկել այն փաստերը, դիտարկումներն ու դիպվածները, որոնք կհաստատեն իմ ասելիքը: Լավ է, իհարկե, որ մարդն իր աչքով տեսնի,




բայց մի քանի բան հաստատ է.

Հայը կարող է Լոս Անջելեսում ապրել առանց ռասայական խտրականություն զգալու:

Հայը կարող է իր երեխաներին (եթե դրամ կա) ուսման տալ իր ազգային, այսինքն՝ հայկական ուսումնական հաստատություններում:

Հայն ունի լիակատար ազատություն այս երկրում ապրելու իր ուզած նահանգում՝ ում հետ որ ուզում է, եւ դոլար վաստակել՝ ինչպես որ կարող է, միայն թե թաքսերը (տուրքերը) ժամանակին վճարի եւ օրենքները չխախտի:

Հայը հաճախում է իր հավատքին, իր գոյությանը ապավեն հայոց եկեղեցին: Ելնելով իր քաղաքական հայեցողությունից, ի՛նքը կընտրի Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի՞, թե՞ Մեծի տանն Կիլիկո կաթողիկոսության եկեղեցիները:

Հայն ունի իր պարբերական մամուլը, տպարանները, գրադարանները, մշակութային միությունները, կուսակցությունները, թատրոնը եւ այսպես շարունակ. մի խոսքով՝ լիարյուն ազգային կյանք:

Հայը կարող է ապրել ողջ կյանքը Լոս Անջելեսում, առանց իմանալու անգլերեն լեզուն: Կյանքը ցույց է տվել, որ այդպես էլ կարելի է:

Հայն իրավունք ունի ստանալ Ամերիկայի քաղաքացու օրինական անձնագիր, բայց համարելով իրեն հայ եւ ապրելով որպես... ամերիկահայ: Ինչ վատ է որ...

Ո՞րն է մոդելը հայի երազած ապագայի քաղաքի՝ Երեւա՞նը, Լոս Անջելես-Փարի՞զը, Նյու Յո՞րքը, թե՞ Մոսկվան, Սանկտ Պետերբուրգը, Մոնրեալը, Օսլոն:

Կասկածներ ունեմ, որ «երազած» քաղաքի նախատիպը Երեւանի եւ Լոս Անջելեսի յուրահատուկ խառնուրդն է: Մենք միշտ եղել ենք Արեւելքի եւ Արեւմուտքի ճամփաբաժանում: Սակայն ավելի կապված ենք եղել Բյուզանդիայի հետ, քան Եվրոպայի: Իսկ գուցե եւ Կալիֆոռնիան ժամանակակից Բյուզանդիոնն է...

❖❖❖

Ինչո՞ւ են հայերն այդպես սիրում Լաս Վեգասը: Հայերս ազարտ սիրող, էքստրեմալ վիճակներ սիրող ազգ ենք: Տեմպերամենտով, կյանքի դինամիկայով ապրող ազգ ենք: Մենք չենք կարող հենց այնպես նստել տանը եւ հեռուստացույց նայել կամ թե ֆրանսիացիների պես նստել բացօթյա կաֆեներում եւ ժամեր անցկացնել մի բաժակ սուրճի կամ գարեջրի ընկերակցությամբ: Հայերիս մոտ միշտ պետք է մի բան կատարվի: Մենք չենք կարող պարզապես վայելել հանգիստը, մենք նման շռայլության իրավունքը չունենք: Մենք միշտ պետք է մի բանով զբաղվենք, եւ լավ կլիներ, անշուշտ, որ այդ բանն էլ մեզ որոշակի եկամուտ բերեր: Լաս Վեգասում փողը ռեալ հասկացողություն է, հիմա՛, հենց այս պահին, եւ եթե բախտդ էլ բերի, ապա մեծ քանակով... Ո՛չ սպասել է պետք ապագա եկամուտներին, ո՛չ էլ փող ներդնել, որ հետո այն աշխատի: Այո՛, ռեալ հասկացողություններն են այստեղ իշխում, գործ, ռիսկ, բախտ, հավատ քո ներքին ուժերի հանդեպ, ազարտ, տեմպ, շռայլություն կորցրածի հանդեպ եւ նույնպես անվրդով տերություն շահածի: Փողի պտտման մեխանիկան անբասիր է աշխատում լաս վեգասյան հարյուրավոր խաղատներում: Ի՞նչ հարգանք ունի այստեղ դոլարը, եւ ինչպես է հայ մարդն անցկացնում իր «ոտքը», ի՞նչ սպասելիքներով է նա այստեղ գալիս եւ ինչպիսի՞ խնդությամբ կամ հակառակը՝ հուսախաբությամբ այստեղից հեռանում: Լաս Վեգասի երկրպագման գրավականներից մեկն է նաեւ Քըրք Քըրքորյանի անունը՝ Լաս Վեգասի կազինոների հիմնադիր արքաներից մեկի: Չլիներ Քըրքը, ապա մի քանի աստղով պակաս կփայլեր Լաս Վեգասի ադամանդյա շողքը: Աշխարհի ամենահաջողակ հայերից մեկը իրոք հսկայական հետք է թողել Լաս Վեգասում: Հայերը սիրում են Լաս Վեգասում շփվել աշխարհի համբավավոր քաղաքները եւ հրաշալիքները խորհրդանշող «իմիտացիոն» (նմանակային) դրախտի հետ, ես նկատի ունեմ զուտ ամերիկյան վարպետությամբ Լաս Վեգասում կերտած հյուրանոց-կազինոները... «Venice», «Paris», «New York», «MGM», «Rio-Rio», «Ceasar Palase», «Piramid»: Խենեշ զվարճանքի, շատակերության եւ դումարի (ի դեպ, երեք այս «մեղքերի» համար Դանթեն նախատեսել էր Դժոխքը) այս միջազգային կենտրոնը:

Այնպես որ, երբ հայ մարդը գալիս է Լաս Վեգաս, նա այստեղ կարող է ֆրանսիական գինի եւ պանիրներ համտեսել, հին Փարիզի բուլվարների նմանակությամբ ստեղծված «Paris»-ի հյուրանոց-կազինոյի սրահներում կամ թե «Venice» շքեղ հյուրանոց-կազինոյի ներսում, ուր վարպետորեն իմիտացիա են արված անգամ Վենետիկյան ջրանցքները, իրենց կախարդական գոնդոլներով, ուր հնչում են տարբեր արիաներ իտալական հայտնի օպերաներից: Իսկ Latino-ի (հարավ-ամերիկյան ոճի) սիրահարների համար դռները բաց են՝ «Rio-Rio» հյուրանոցն իր վիթխարի կազինոյով: Նայիր, հրճվիր եւ խրախուսվիր, թե ինչպես են հյուրանոցի մեծ սրահի առաստաղից կախված թափանցիկ ու շարժական վագոնիկների միջից իրենց կրքոտ կառնավալային պարերը ցուցադրում կիսամերկ բրազիլյան գեղեցկուհիները: Իսկ առաջին հարկի ռեստորաններում վայելիր ուզածդ չափ բրազիլական «գրիլները», որոնք պատրաստվում են ուղիղ աչքիդ առաջ, միայն թե շամփուրների փոխարեն մետաղյա ցանցեր են: Եթե դու սիրել ես պատմությունը, եւ մասնավորապես Հին Հռոմը, իր անտիկ շրջանով՝ քանդակներով, արձաններով, շքեղ բաղնիքներով, ապա գնա «Ceasar Palace» հյուրանոց, ուր կտեսնես է՛լ սրունկների շուկա, է՛լ սատիրիկոնյան խենեշ քեֆեր գինիով եւ վավաշոտ հռոմեուհիներով, է՛լ բնականից չջոկվող երկրաշարժներ ու Պոմպեյի հրաբխի ժայթքումներ. այնպես որ, գլուխդ կպտտվի...

Մի խոսքով, Լաս Վեգասը նաեւ աշխարհի հրաշալիքների իմիտացիոն արքայությունն է: Դե ասենք իմիտացիա (նմանակում) հասկացողությունը շատ են սիրում Ամերիկայում եւ առանց նրա այստեղ չեն կարող յոլա գնալ (բնականաբար եւ տեղի հայերը): Իսկ խաղի ազարտը, որ այդ ախտով տառապողի համար երեւի գերագույն հաճույք է, ասես ցամաք աղբյուր լինի, ուր ջրի փոխարեն դոլար է հոսում, եթե իհարկե, դու բախտավոր աստղի տակ ես ծնվել եւ ժամանակին ես հասկացել, որ «Երթալը ճիշտ է»:

Ինչպես ասացի, ոչ բոլոր մեր հայրենակիցներն են գալիս Լաս Վեգաս խաղի համար: Շատերն ուղղակի իրենց հանգստյան օրերն են անցկացնում այստեղ: Տղաներն իրենց ընկերուհիների հետ, երիտասարդ կամ տարեց ամուսինները գալով այստեղ, պատկերացնում են, թե՛ միանգամից այց են կատարել թե՛ աշխարհի ամենամեծ կազինոն եւ թե՛ ամենագեղատեսիլ քաղաքները՝ Փարիզ ու Վենետիկ, Հռոմ եւ Ռիո Դի Ժանեյրո: Էլ չեմ ասում, որ աշխարհի շա՜տ երկրների խոհանոցը դու կարող ես համտես անել Լաս Վեգասի ռեստորաններում, դու կարող ես լողալ «Mandalaya beach» հյուրանոցի լողավազանում, ուր ջուրը իրական օվկիանոսյան է, ավազը բերված Հավայան կղզիներից եւ հատուկ սարքերն էլ կարող են արհեստական ալեկոծություն սարքել: Լաս Վեգասն, ինչպես մի հեքիաթային կալեյդոսկոպի մեջ, վերստեղծել է աշխարհի հայտնի վայրերի մանրակերտը, հոգ չէ, որ դա ճիշտը չէ,

AZG NEW SHABAT 1.QXD 22/09/2016 21:28 Page 9



բնականը չէ, այլակերպն է, հանճարեղ նմանակում է (իմիտացիա), բայց ասենք Ամերիկան վաղուց հրաժարվել է բնականից, թէ՛ ուտեստեղենը, թէ՛ ճարտարապետությունը, թէ՛ կանացի մարմինները ու անգամ ատամները արհեստական են: Անգամ սիրո զգացմունքն են վստահել համակարգչին: Եվ դա այնտեղ ողջունելի է: Սուտը, արհեստականը ամենուրեք անցնում է ճշմարտի, բնականի տեղ:

❖❖❖

Ամենից շատը Ամերիկայում մնացել եմ 82 օր, 1992-1993 թվականների ձմռան ամիսներին: 82 օրերը թեեւ շատ հագեցած էին, բայց եւ այնպես բավական երկար անցան: Ընդհանուր առմամբ ես սիրեցի Ամերիկան, մանավանդ Կալիֆոռնիան, քիչ չեն անտառոտ լեռները, կանաչ դաշտերն ու բլուրները, պտղատու ծառերը մայթեզրերին, մեկը մյուսից զով ու դալար պարտեզները, դեռ Տերն էլ իրենց օվկիանոս է նվիրել...

Այդքան գեղեցկություն մեկ մարդուն բաժին ընկած, ընդ որում՝ բնական գեղեցկություն, բնությունից նվեր ստացած, ոչ թե արհեստական: Ինչպե՞ս չհիանաս բնության այս շռայլ նվիրատվությամբ: Եվ ուրախ ես, որ այս պարգեւից հային էլ է բաժին հասնում: Չեմ թաքցնի եւ կասեմ՝ ես սիրեցի Ամերիկան, բայց ավելի շատ սիրեցի ամերիկահայերին, նրա բազմազգ բնակչության այն մասը, որ առավել մոտ ու հարազատ է ինձ: Ե՛վ նրանց, ովքեր այդպես էլ անգլերեն չսովորեցին, ե՛ւ նրանց ովքեր, անգլերեն են խոսում անգլիացուց էլ լավ: Ե՛վ նրանց, ովքեր իրենց զավակներին ամեն առավոտ լիմուզիններով են տանում դպրոց, ե՛ւ նրանց, ովքեր փողի սղության պատճառով իրենց երեխաներին տանում են Լոս Անջելեսի քաղաքային ձրի դպրոցները:

Ամերիկահայը, եթե հարստացել է, միայն շնորհիվ իր խելքի եւ աշխատասիրության: Այսինքն՝ ամերիկահայերը միայն իրենք են իրենց վիճակի տերը:

Դա իմ առաջին այցն էր Միացյալ Նահանգներ, երբ ես հյուրընկալվել էի մորս հորեղբոր աղջկա՝ Ալիսի տանը: 1992-ի դեկտեմբերին, երբ ժամանեցի Միացյալ Նահանգների ամենահայաշատ նահանգը, ես ունեի ընդամենը տասը բարեկամ եւ ծանոթ: Տեղացիներից Տիգրանուհին՝ Մոնթեբելլոյից, Վարդեսի հորեղբոր թոռը՝ Ջոն Գաբրիելը Մոնթեբելլոյից, դաշնակցական ընկեր Վարուժան Դեմիրճյանը՝ Փասադենայից, ծագումով ղարաբաղցի տատիկիս հին բարեկամ Ջոնի Բոզոֆի թոռը՝ Ջանիկը, եւ մի քանի հոգի էլ Հայաստանից՝ 1975-1990 թթ. գնացածներից: Երբ 1993-ի մարտի 12-ին Նյու Յորքից վերադառնում էի Երեւան, իմ ծոցատետրում ունեի երեք հարյուրից ավելի ծանոթ-բարեկամի անուն: Եվ դեռ Նյու Յորքում պետք է հանդիպեի իմ ճանաչած ամենաազնվասիրտ հայորդիներից մեկի՝ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի հետ: «Ինդո՞ր ես, Ավիկ» - ականջիս մեջ են առաջին բառերը նրա կողմից ուղղված ինձ, որպես իր հին ծանոթի:

Ճանապարհ գցելուց առաջ Վարուժան Դեմիրճյանը հարցրեց. «Կխորհիմ թե մյուս տարի նորեն կուգաս Ամերիկա, բայց անշուշտ հոս ավելի երկար ատեն կմնաս...»:

-Գալը կգամ, ընկեր Վարուժան, բայց հազիվ թե ավելի երկար մնամ: 82 օրը շա՜տ-շատ էր, ամեն օրը հաշվել եմ... եթե ավելի երկար մնայի, կապը կխզվեր, սերը կփոխվեր կարոտի:

-Մի՛ ըսեր, մենք բոլորս կարոտի զավակներ ենք: Հիմա գնալ-գալը դյուրին է, մի օր դուք կգաք, մի օր մենք, ի՞նչ կա, ազատ ճամփա է...

❖❖❖

Հետաքրքրական բան էր ինձ հետ կատարվել: Առաջին գիշերը Լոս Անջելեսում, երբ քնեցի Ալիսենց տանը՝ երազ տեսա, իբր անցել են դիմացի 82 օրերը եւ ես արդեն վերադարձել եմ Երեւան ու հանդիպում եմ կնոջս՝ Ռուզանին, երեւանյան մեր տանը: Էդ երազից հետո դեռ պետք է անցներ 82 օր: Ու ես մտածեցի. «Ախ, ափսոս, որ երազ էր...»:

Ավելորդ է ասել, որ 75 օրից հետո վերջին մեկ շաբաթը համարյա չեմ քնել: Կարոտը քնել չէր թողնում: Անընդհատ ֆիլմի պես աչքերիս առաջ պատկերացնում էի առաջին քայլը օդանավի տրապից իջնելուց եւ հանդիպումը կնոջս, երեխեքիս հետ եւ, այն ատեն, փառք Տիրոջը, կենդանի էին մայրս եւ հայրս: Վերջին երեք օրը 1993 թ. մարտին, Լոս Անջելեսից հետո ես ապրեցի Նյու Յորքում՝ Մանհեթենում, ինչպես ասացի, իմ իմացած ամենաբարի ու ազնիվ հայերից մեկի՝ Մեսրոպ արք. Աշճյանի տանը: Եվ որքան որ Նյու Յորքն իր երկնաքերներով, ճարտարապետական բացառիկ հրաշալիքներով, ժամանակակից արվեստի թանգարաններով հիացրեց ինձ, նույնքան էլ հիացրեց Մեսրոպ սրբազանը, որ այսպիսի մարդիկ էլ կան մեր օրերում, որ այսպիսի եկեղեցական կա, որը վայելում է Արեւելյան ափի շատ հայերի սերն ու հարգանքը: Ես հասկացա, որ մեր օրերում էլ համեստությունն ու ազնվությունը հզոր զենք են՝ համարյա հավասար հավատքին: Երբ ուշ երեկոյան տուն էինք գալիս, սրբազան հայրը միացնում էր տան հեռախոսի օթոմատիկ սարքը, որը ձայնագրած էր լինում բոլոր զանգահարողներին: Չեմ չափազանցնում, ուղիղ քսան րոպե լսվում էին տարբեր մարդկանց տարբեր ձայներ: «Հայր, սրբազան» - սա է, նա է, կային մարդիկ եւ տիկնայք, որոնք սրբազանին ներկայանալու կարիք չունեին, հարազատ ու հնուց ծանոթ ձայներ էին, բոլորը սրբազանին հրավիրում էին՝ է՛լ բնակարանամուտ, է՛լ կնունք, է՛լ հոբելյան ու շնորհանդես, գինեձոն ու հոգաբարձուների ժողով: Սրբազանը փնտրված, սիրված ու հարգված մարդ էր հայության շրջաններում: Վերջին տարիները նա հայրենիքում էր, մենք ոչ միայն հիշում, այլեւ կարոտում ենք նրան:

Հիշելով Մեսրոպ սրբազանին, ես հետին թվով այսօր ինձ հարց եմ տալիս, իսկ որտեղացի՞ էր Սրբազանը, ի՞նչ երկրի քաղաքացի. ծնունդով Սիրիայի հայաստեղծ Քեսաբից, ուսում էր առել Դամասկոս, ծառայել Բեյրութ, ապա մի երկար շրջան ապրել Միացյալ Նահանգներում, եղել Կիլիկիո կաթողիկոսության թեմական առաջնորդը ողջ Ամերիկայի Արեւելյան ափի՝ Նյու Յորք: Ապա Մայր աթոռ սուրբ Էջմիածին, եթե կարելի է ընդհանրացված ասել՝ նստատեղին Մուղնու վանքը: Իր մահկանացուն նա կնքեց Նյու Յորքում, ուր մեկնել էր Երեւանից ընդամենը տասը օրով եւ հենց ոտքի վրա էլ, ինչպես ժողովուրդն է ասում՝ հոգին լուսավորեց: Թաղված է Անթիլիասի եկեղեցու բակում: Մինչդեռ փափագում էր, որ վերջին հանգրվանը լիներ Մուղնիի վանքը: Այս կյանքի ճակատագիրը, թերեւս խտացված մոդելն է ապագա հայի, որի նախատիպը Աշճյան սրբազանն է:

Նման հայ չէ՞ արդյոք Շառլ Ազնավուրը. աշխարհի քաղաքացի, Ֆրանսիայի առաջին մեծության աստղ, Շվեյցարիայի քաղաքացի, սակայն իր ողջ մարդկային էությամբ հայ եւ անգամ Հայաստանի Հանրապետության արտակարգ ու լիազոր դեսպան Շվեյցարիայում...

❖❖❖

«Աս երկրեն որ դուրս գամ, լոլիկ ալ չպիտի ուտեմ»:

«Ինչո՞ւ»:

«Որովհետեւ լոլիկն ալ կարմիր է»:

«Անոնք, որ Խորհրդային Հայաստան եկան 1935-1939 թվերին, միշտ կոչվեցին միամիտներ, իսկ 1945-1949 թվերին եկածները՝ խաբվածներ, ավելի ուշ շրջանի եկածները՝ ախմախներ»:

«Դու տեսե՞լ ես մեր «Արարատ» կենտրոնը, այնտեղի մեկ հյուրին երկու խնամակալ է հասնում («Արարատը» Կալիֆոռնիայի նահանգի լավագույն հանգստյան եւ բուժման տունն էր տարեց հայերի համար): Ես մեկ անգամ չէ, որ այցելել եմ այդ տունը, ե՛ւ այն ժամանակ, երբ որեւէ ծանոթ այնտեղ չեմ ունեցել, այցելել եմ նաեւ տարբեր բարեկամների հետ, որոնց տատիկը կամ պապիկը այնտեղ են գտնվել-ապրել: Ես, իհարկե, նման մաքրություն, հոգատարություն եւ խնամք չէի տեսել նման բնույթի հաստատություններում ո՛չ Երեւանում, ո՛չ Մոսկվայում: Ծանոթացա «Արարատի» ղեկավար տիկնանց հետ, կային եւ՛ բժիշկներ, ե՛ւ լավ կանայք, որ հոգ էին տանում իրենց խնամքին վստահված տարեց անձանց: Ինձ եւ Ռուզանին նաեւ ցույց տվեցին դեմի եկեղեցի տանող այն պատվո զբոսուղին, որի մայթերի վրա դաջված էին մեծանուն հայորդիների անունները, հակիրճ կենսագրական տվյալներով: Հպարտությամբ կարդացինք Մարտիրոս Սարյանի եւ Ավետիք Իսահակյանի անունները: Իսահակյանի անունը կարդալիս այստեղ՝ հայոց ծերանոցի բակում, անկարելի էր չհիշել նրա տողերը «Անուշ մորես բաժանվել եմ //Տխուր, տրտում քուն չունիմ...»: Տվյալ դեպքում բանաստեղծն ինքն իրեն էր խարազանում, որ մորը թողել, հեռացել է օտար ափեր: Մինչդեռ այստեղ բերում են իրենց մայրերին օջախներից (հարուստ թե աղքատ, մի հաշիվ է) եւ թողնում մենակ: Իսկ բերելուց առաջ հարցրե՞լ էին արդյոք նրանց կարծիքը: Այստեղ եւս մեկ անգամ հիշեցի 1907 թ. Ալեքսանդրապոլում գրած հայ պոետի տողերը.

«Տղա՛ս, վերցրո՛ւ պարկը քեզ հետ
Պարկը տանը պետք կըգա»:

...Ծերունի մայրը, ինձ տեսնելով, ժպտաց, ճանաչեց, ես մոտեցա, համբուրեցի, նրան վերջին անգամ տեսել էի ուղիղ տասը տարի առաջ, կրկին Լոս Անջելեսում, սակայն իր տանը, այստեղ, ասես նա մի տեսակ մանկացել էր, ծերությունը տանում է մարդուն դեպի մանկության մի անմեղ, բարի, հիշողություն չունեցող շրջան, եւ հայացքն էլ դառնում է մանկական, մարդուց միայն բարին սպասող հայացք...

Երեւանում այն ընտանիքի անդամները, որոնք իրենց տարիքն առած հորն ու մորը տալիս են ծերանոց, համարվում են «անօրեն զավակներ», հարեւանները դադարում են նրանց բարեւ տալուց:

Հանդիպում են երկու հին ընկեր Գլենդել Մոլում.

«Էյ, ինդո՞ր ես, բարեկամս»:

«Ինդոր պիտի ըլլամ, որդիս ամուսնացուցի...»:

«Բայց ինչո՞ւ տեսակ մը տխուր ես»:

«Էհ, ի՞նչ ըսեմ հապա, հարսը տղա է... սիրտ կմնա՞»:

«Էհ, գոնե հա՞յ է»...

Երեւանում չկան այս բնույթի ամուսնություններ, այստեղ մենք իրոք որ միանշանակ պահպանողական ենք, կնշանակի դեռ որոշ ժամանակ անաղարտ կպահենք մեր գենը:

«Հայրենադարձ մարդ մը գնացքով կը հասնի Խորհրդային Հայաստան՝ Երեւանի կայարան: Իրերը վագոնից ցած կիջեցնի: Կըսե, երթամ հայրենի հողը համբուրեմ: Կերթա, ծնկաչոք կիջնի հողը երեք անգամ կհամբուրե, ետ կուգա ու կը տեսնե ճամպրուկները չկան, գողցեր են.

-Էհ, եթե գողերը հայ են, թող բարի վայելեն»:

Եվ սակայն իրենցից՝ հայրենադարձներից, այդպես էլ ոչ մի օրենքով գող դուրս չեկավ: Այս մարդիկ շատ կիրթ էին, որ գողություն անեին եւ շատ խղճով ապրող, որ իրենց հայրենակիցներին թալանեին:

Դրսի հողը, որքան էլ այն բարգավաճ լինի, չի կարող փոխարինել հայրենի հողին: Կարո՞ղ էինք մենք անկախության առաջին տարին պատկերացնել, որ մի կարճ ժամանակում ԱՄՆ-ում կհավաքվի մոտ մեկ ու կես միլիոն հայություն: Հիշենք Վիլյամ Սարոյանի նշանավոր պրիտչը մի փոքրիկ թռչնի հայրենիքի մասին՝ «Հեծանվորդը Բեւերլի Հիլզից» նրա ինքնակենսագրական վեպից: Հիշենք խոսքերը հայ պոետների՝ աշխարհի ամենալավ տունը, հայրենի ծուխը, հայ «Քու հողին մեռնիմ, անգին հայրենիք...» ժողովրդական խոսքը՝ էլի հայրենիքն անուշ է...

Լոս Անջելեսի «Kodak» բացօթյա, հիսուն հազար տեղանոց հսկայական համերգասրահում երգում էր Քրիստինե Պեպելյանը: Նրբամարմին, նրբիրան, նրբանկատ պահվածքով, շատ ճաշակով հագնված եւ իր՝ ասես վազրուհու աչքերով, բայց շատ թովիչ եւ կանացի: Այս նուրբ աղջիկը եւ 50.000-անոց հսկա դահլիճը, որն ուզում է որսալ նրա ամեն մի խոսքը, քայլը:

Եվ մեր տաղանդավոր աղջկան հաջողվում է իր բռի մեջ պահել դահլիճը, իրեն լսել տալ, խանդավառել ու եղած պահին տխրեցնել եւ նույնիսկ լացացնել: Ամեն անգամ, երբ նա նոր երգ է սկսում, դահլիճը ծափահարում է, դահլիճը համոզված է, որ Քրիստինեն կպարգեւի իր հայրենակիցներին ոգեւորության եւ խանդավառություն:

Այս համերգը (որը նայում էի հունիսի սկզբներին հեռուստատեսությամբ) ոչ պակաս հետաքրքրական էր դիտել նաեւ հազարավոր հանդիսատեսին մի վայրում, այսպես հաշտ ու խաղաղ հավաքված տեսնել 50.000 հայության: Դիտել նրանց դեմքերը, հայացքները, փորձել կռահել նրանց տրամադրությունները:

Աչք է զարկում մի ընդհանուր միտում. Մարդիկ գոհ են, կուշտ են, լավ հագնված են: Անշուշտ, նրանց մեջ կան մարդիկ, որ հազիվ են ծայրը ծայրին հասցնում, կան, որ ծայրահեղ հարուստ են, բայց հիմնական մասը ապահովված միջին խավն է, մի խավ, որ այդպես էլ մեզանում՝ Հայաստանում, չձեւավորվեց:

Քրիստինեն երգում էր իր շատ հուզիչ «Մայրիկ» երգը, հեռուստաէկրանի խոշոր պլանով ցույց է տրվում «Kodak»-ում հավաքված մեր հայրենակիցների դեմքերը, որոնց 90%-ը Հայաստանից արտագաղթածներն են: Ես նկատում եմ՝ կանացի դեմքերն ավելի զգայական են արձագանքում երգչուհուն, նկատում եմ, որ համարյա բոլորի աչքերում ներքին տխրություն կա, դա շատ բնական երեւույթ է, չես թաքցնի քո ներաշխարհը: Ի՞նչ է դա. կարոտ քո հայրենիքի՞, վիշտ կորցրած մայրիկիդ հանդե՞պ, չկայացած սիրո՞ հանդեպ. բայց մի բան անվիճելի է՝ պակաս կա երջանկության: Մինչդեռ ավելի զուսպ է տղամարդկանց ռեակցիան, եւ զարմանալի է՝ ոմանց դեմքերը արտահայտում են գոհունակություն, ոմանցն էլ՝ անտարբերություն: Չգիտեմ նրանք վաղուց, թե՞ միայն վերջերս են գնացել, բայց մի բան ակնհայտ է, որ նրանք կարոտ չունեն... Որովհետեւ շատերի դեմքից չես կռահի նրանց հոգեկան վիճակը, եւ ոչ թե այն լավ քողարկված է, այլ պարզապես անհաղորդ են. «Մենք անցել ենք քավարանի մեր ճամփով, եւ ուրիշ բան մեզնից մի սպասեք»: Մենք հո Հռոմի պապը չե՞նք, որ ձեզ կարեկցենք եւ ոգեւորենք, էլ չենք ասում՝ օգնենք» - մտավորապես այս էի ես կարդում նրանց դեմքերին, ամեն անգամ երբ ես լսում էի Քրիստինեի ձայնը:

Իսկ գուցե ես սխալվում եմ, բայց ես սովոր եմ հավատալ իմ ինտուիցիային, ահա մոտավորապես այսպիսի մտքեր ինձ պաշարեցին հունիսյան մի երեկո Երեւանից Լոս Անջելեսը դիտելիս: Բայց ահա մեկ ժամ անց համերգից հետո հեռարձակվեցին հայկական լուրերը եւ իմ աչքի առաջ նորեն անցան հիշատակված կուշտ ու գոհ դեմքերի մի գալերեա: Այո, նրանք չեն փոխվում, նրանք ամենուրեք նույնն են...

Բայց կա նաեւ անհերքելի իրականություն, 1992 թվին ես դեռ չէի պատկերացնի, որ Թաքայի կամ Նունեի, Արմանչիկի կամ Արմենչիկի համերգներին Լոս Անջելեսում բաց երկնքի տակ կհավաքվի 80-100 հազար հայություն եւ մեկ մարդու պես նրանք կձայնակցեն երգչին, ձեռքերին վառվող մոմ կամ թե մոբիլային հեռախոս, եւ ազգային պարի կբռնվեն՝ բոլորի դեմքին դրոշմված այնքա՜ն հազվագյուտ հայաստանյան հայի համար՝ անհոգությունն ու կյանքից գոհունակությունը:

❖❖❖

Ապրիլի երկուսի վաղ առավոտյան դուրս եկա փողոց՝ մոտիկից տեսնելու իմ հայրենակիցների դեմքերը, զգալու նրանց շունչը, տեսնելու ե՛ւ ջահելին, ե՛ւ ահելին, ե՛ւ հղի կանանց, ե՛ւ միայնակ ծերունիներին: Ես, ինչպես եւ նրանք, շատ լավ գիտեինք, թե ինչ է կատարվել այս աշխարհում նախորդ գիշեր... Կատարվել էր եւ դեռ պիտի շարունակվեր: Պատերազմական առաջին օրվա առավոտը քաղաքն այնքան էլ լիքը չէր մարդկանցով, զով օր էր, որտեղի՞ց էր գալիս այս քամին: Հիմա այնտեղ նրանք են՝ քո զավակները, տագնապը նրանց ճակատագրի համար չի կարող բնականաբար հանգիստ տալ քո հանդիպակաց երեւանցիներին... Ամենածանրը պատերազմի սկիզբը մեր քաղաքում ընկալում են կանայք, մանավանդ մայրական տարիքի կանայք: Սա պատերազմյան երրորդ առավոտն էր՝ 1941 թ., 1991 թ., եւ 2016 թ. Երեւան քաղաքում: Տխուր ու երկար ձմեռվանից հետո այս գարունը՝ իրոք որ «Գարուն ա, ձյուն ա արել...»:

Ինձ համակել էր այն զգացմունքը, որ մարդիկ ոչ թե պարզապես տնից դուրս են եկել, այլ ելել են իրար սատար կանգնելու, ե՛ւ ես, ե՛ւ իրենք իրար մոտ լինելու, պարզապես միասին լինելու կարիք ունենք: Չէ՞ որ Երեւանում այս վերջին տարիներին արդեն քիչ երեւանցի է մնացել: Մարդիկ պարզապես քչացել են: Դու այլեւս չես զգում մարդկային ժխոր քաղաքում, ինչպես, օրինակ, խորհրդային տարիներին, մանավանդ տոն օրերին... Եվ այսպես, րոպե առ րոպե մարդկային գետը ավելի ու ավելի վարարում էր: Յուրաքանչյուրը, թեկուզեւ դեմքին ժպիտ չուներ, բայց իր քայլը ավելի խրոխտ էր գցում: Այսպես գնում են ոչ թե շքերթի, այլ՝ զորահավաքի: Խաղաղ քաղաքի ձայների մեջ ավելի լսելի էին դառնում, ավելի համահունչ էին դառնում ժողովրդի քայլի ձայները: Ասես համախմբվում, բռունցք էին դառնում դեռ երեկ խաղաղ քաղաքում իրենց առօրյա գործերով ապրող մարդիկ: Երեխեք, ջահելներ, կանայք, տղամարդիկ, ծերեր ու միայնակ ծերուկներ համախմբվում էին, միանում հուժկու ընթացող գետի պես: Դու զգում էիր ինչպես է մի միասնական բռունցք դառնում քո ժողովուրդը:

Եվ այս գիտակցությամբ հոգիդ պարուրվում է երջանկությամբ ու հպարտությամբ՝ ո՛չ դու ես մենակ, ո՛չ նրանք:

Սա մենք ենք, հայաստանցիներս, երեւանցիներս, հայ ժողովուրդը, հայ սփյուռքը՝ հայ բանակը...

*Շարունակելի 5 եւ վերջ*

**2016 մարտ-մայիս**
**Երեւան**

# Շարունակվում է Ամերիկայի եւ Կանադայի Թեքեյան մշակութային միության Կենտրոնական վարչության կողմից ապրիլյան քառօրյա պատերազմում հերոսաբար զոհված զինվորների ընտանիքներին բաժանվել նյութական օգնություն





Ուղեկցությամբ Վանաձոր քաղաքի ՌԱԿ պատասխանատուներից Նելլի Գյուլզադյանի, ընտանիքը, որին մենք այցելեցինք՝ Լոռու մարզի, Վանաձոր քաղաքի Զինկոմիսարիատից զորակոչված 1981 թվականին ծնված պայմանագրային զինծառայող **Դավթյան Կարեն Պարգեւի** ընտանիքն էր: Կարենի ընտանիքը ապրում էր ծնողների, կնոջ՝ Մարինեի եւ երկու անչափահաս երեխաների հետ՝ 3 տարեկան աղջկա եւ 1.7 ամսական տղայի հետ: Դավթյան Կարենի հայրը՝ Պարգեւը, Արցախյան ազատագրական պայքարի առաջին օրերից որպես կամավոր մեկնել է Արցախ: Մարտնչել եւ վերադարձել է ռազմաճակատից: Երբ Կարենը իր ընտանիքի անդամներին հայտնում է, որ ցանկանում է շարունակել իր զինվորական ծառայությունը որպես պայմանագրային ծառայող, մայրը եւ կինը դեմ են եղել, խնդրել են չգնալ, մնալ ընտանիքի հետ: Բայց նա մնացել է անդրդվելի: Կարեն Դավթյանը ջոկատի գնդացրորդն էր: Ուներ աներեր ձեռք, սուր աչք: Հերթական մարտական հերթապահության ժամանակ մարտական առաջադրանք կատարելիս, ձնահոսքի պատճառով ընկնում է ձորը ու մահանում թթվածնային անբավարարությունից: Կարեն Դավթյանի ծնողները անբուժելի հիվանդ են: Նրա մահից հետո կնոջն ու երկու երեխաներին տրամադրվել է երկսենյականոց բնակարան, որի վերանորոգման աշխատանքները շարունակվում են: Մենք գումարը հանձնեցինք այդ բնակարանում:

Հաջորդ ընտանիքը, որին մենք այցելեցինք, Վանաձորի Զինկոմիսարիատից զորակոչված 1996 թվականին ծնված շարքային **Մինասյան Հայկ Սամվելի** ընտանիքն էր: Նա ապրում էր խիստ անբարեկարգ երկու սենյականոց բնակարանում, ծնողների եւ 3 քույրերի հետ: Նա տան միակ արու զավակն էր: Մինասյան Հայկը դասակի ավագ ռադիոհեռախոսավարն է, կարեւոր հաղորդագրությունների մասին առաջինն էր իմանում եւ արագ կատարում բոլոր հրամանները: Հայրը՝ Սամվելը, պատմում էր, որ մահվան օրը խոսել է որդու հետ, նա հանգիստ էր, բայց քչախոս: Ընդհանրապես նա հասկանալով ընտանիքի սոցիալական ծանր վիճակը՝ շատ քիչ բան էր ուզում ծնողներից՝ մեկ-մեկ մարտկոց, սափրվելու եւ այլ հիգիենիկ պարագաներ: Ուրախ ու կատակասեր էր, քույրերի հետ շատ կապված ...Վանաձոր քաղաքում իր դպրոցում բացվել է Հայկի անունով դասարան: Մինասյան Հայկը հետմահու պարգեւատրվել է ԼՂՀ եւ ՀՀ Արիության շքանշանով:

Մյուս ընտանիքը, որտեղ եղանք, Վանաձոր քաղաքի Զինկոմիսարիատից զորակոչված 1997 թվականին ծնված շարքային **Քալաշյան Սպարտակ Սարգսի** ընտանիքն էր: Նրանց ընտանիքը ապրում էր երկու սենյականոց բնակարանում՝ ծնողների եւ կրտսեր քրոջ հետ: Նրանց մենք հանդիպեցինք բնակարանի վերանորոգման գործերով տարված: Հայրը՝ Սարգիսը, պատմում էր, որ ինքը նույնպես 25 տարի առաջ մասնակցել Արցախյան պատերազմին: Սպարտակի մորեղբայրը 1992 թվականին զոհվել է 19 տարեկան հասակում Մարտակերտում, ինչպես եւ Սպարտակը: Հայրը մեծ հպարտությամբ ասում էր, որ իր հերոս տղան դաստիարակվել է հայրենասիրական մթնոլորտում, դեռ մանկուց նա գիտեր ինչ է պատերազմը, ուր է գնացել հայրը, երբեք մորը չէր հարցնում, թե երբ կգա հայրը, գիտեր լուռ սպասել: Սպարտակ Քալաշյանը հորը ասում էր արի դիրքեր, մեզ սովորեցնելու շատ բան ունես: Հայրը՝ Սարգիսը, ասում էր - այս սերունդը ավելի ուժեղ է քան մենք: Ի դեպ Քալաշյանների ընտանիքը որոշել է արու զավակ ունենալ Սպարտակ անունով:

Հաջորդ ընտանիքը ապրում էր Սպիտակ քաղաքից 40 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Կաթնաջուր գյուղում: Սպիտակ քաղաքի Զինկոմիսարիատից զորակոչված 1996 թվականին ծնված շարքային **Վարդերեսյան Արտյոմ Արսենի** ընտանիքը ապրում էր գյուղապետարանի հարակից տարածքում: Արտյոմի պապը՝ Անդրանիկը, ֆիդայի է եղել, հայրը՝ Արսենը նույնպես Արցախյան պատերազմի մասնակից, քաջ ու պինդ տղա են մեծացրել: Դպրոցում լավ է սովորել, խելացի էր, մեքենաներից գլուխ էր հանում: Հայրը ասում էր, որ բոլորովին չէր վախենում բանակ գնալուց: Գյուղից շատ երիտասարդներ են մեկնել Ռուսաստան արտագնա աշխատանքի, բայց նա մնացել է: Արտյոմ Վարդերեսյանը ապրում էր ծնողների, պապի եւ 2 քույրերի հետ: Հայրենասիրական դասերն ստացել է հորից ու պապից: Ծնողները ցույց տվեցին մի քանի շնորհակալագրեր լավագույն զինծառայության համար: Հայրը պատմում էր, որ Արտյոմի մոտ՝ դիրքերում է եղել նրա մահվանից մեկ օր առաջ: Արտյոմը մահացել է դիրքերում գիշերային հերթափոխում հակառակորդի դիպուկահարի գնդակից: Վարդերեսյանների մայրը երազ է տեսել, որտեղ Արտյոմը գալով տուն ասել է -Ես վերադարձա: Ընտանիքը որոշել է արու զավակ ունենալ: Վարդերեսյան Արտյոմը հետմահու պարգեւատրվել է ՀՀ եւ ԼՂՀ շքանշաններով:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

*Գյումրի*

# Բարեգործության համար... հարկային պատի՞ժ, թե՞ պետական աջակցություն է պետք «Շիրակ կենտրոնին»

Գյումրու անօթեւան եւ ծայրահեղ կարիքի մեջ ապրող ընտանիքների աջակցությանն ուղղված հետեւողական աշխատանքով հայտնի «Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպության հետագա գործունեությունը վտանգված է: Պատճառը նրան վերջերս ներկայացված անարդարացի ու նաեւ կազմակերպության հնարավորությունների առումով անիրական հարկային պահանջն է: Խնդիրը կապված է կենտրոնի միջոցով անօթեւանների համար բարեգործական հիմունքներով գնված ու նրանց նվիրված բնակարանների հետ:

Ի թիվս իրականացվող այլ աշխատանքների, «Շիրակ կենտրոնի» գործունեության շնորհիվ վերջին մի քանի տարիների ընթացքում հիմնականում արտերկրի մեր հայրենակից հովանավորների, կազմակերպությունների կողմից Գյումրիում գնվել ու ժամանակավոր կացարաններում, սոցիալապես ծայրահեղ ծանր պայմաններում բնակվող մոտ 60 ընտանիքների նվիրվել են բնակարաններ: Միայն այս տարի տնակների անմարդկային կենցաղային պայմաններին հրաժեշտ տվել եւ այդ կերպ բնակարանի տեր է դարձել արդեն 18 ընտանիք՝ ընդհանուր հաշվով մոտ 40 մանկահասակ երեխաներով:

Իսկ քանի որ նախորդ տարիներին եղել են դեպքեր, երբ կենտրոնի միջնորդությամբ բնակարան նվեր ստացած ընտանիքը, երեւի նյութական կարիքից դրդված, հետո վաճառել է այն, անօթեւան ընտանիքներին օգնելու պատրաստակամություն հայտնած որոշ հովանավորներ այս տարի պայման են դրել, որ իրենց միջոցներով գնվելիք բնակարանները մինչեւ 15 տարի ժամկետով համարվեն «Շիրակ կենտրոնի» սեփականությունը, իսկ անօթեւան բազմազավակ ընտանիքներին տրվեն անհատույց օգտագործման՝ այդ ժամկետը լրանալուց հետո բնակարանները տվյալ ընտանիքներին որպես սեփականություն նվիրելու պայմանով: Այդ պայմանով այս տարի ձեռք բերվել եւ անհատույց օգտագործման է տրամադրվել նախ 8, իսկ վերջին օրերին՝ եւս 2 բնակարան: Ինչպես նշեց «Շիրակ կենտրոնի» ղեկավար **Վահան Թումասյանը**, կազմակերպությունը, բնականաբար, այս բարեգործական ծրագրից ոչ մի լումա եկամուտ չի ստացել եւ չէր էլ կարող ստանալ, բնակարանները ֆիզիկական անձանցից ձեռք են բերվել հովանավորների անմիջական մասնակցությամբ, բնակարանների գները որոշվել են նրանց երկկողմանի բանակցությունների միջոցով, շուկայական ամենանվազագույն արժեքներով: Հապացույց դրա, կնքվել են նաեւ բնակարանների անհատույց օգտագործման ու հետագա նվիրման վերաբերյալ նոտարական վավերացմամբ պայմանագրեր, կադաստրի պետական մարմնի կողմից բնակիչներին տրվել են համապատասխան վկայականներ: Ավելին, կենտրոնն ինքը որոշ դեպքերում միջոցներ է հայթայթել եւ կատարել նոտարական ու կադաստրային ձեւակերպումների համար պետության կողմից սահմանված վճարումները, ինչպես նաեւ բնակարան ստացած բոլոր անապահով ընտանիքների տնակների քանդման, տարածքների ազատման եւ աղբից մաքրման աշխատանքները, տնակների քանդումից առաջացած փայտանյութն էլ որպես վառելափայտ բաժանել դեռեւս տնակներում բնակվող անապահով ընտանիքների:

Բայց ահա մեկ ամիս առաջ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Գյումրու տարածքային հարկային տեսչությունից ստացված գրություններով՝ ֆիզիկական անձանցից ձեռք բերած բնակարանների համար կազմակերպությունից պահանջվում է գնված բնակարանների արժեքի 10 տոկոսի չափով եկամտահարկ: Ընդհանուր հաշվարկով խոսքը մոտ 5 մլն դրամի հարկի մասին է... Հասարակական կազմակերպությունը բարեգործական ճանապարհով ձեռք բերված եւ անօթեւան ընտանիքներին նվիրված, ինչպես նաեւ առաջիկա մեկ տարում նախատեսվող եւս մեկ տասնյակ նման բնակարանների ծրագիրը բարեգործական ճանաչելու ու եկամտային հարկ վճարելու պարտականությունից ազատելու խնդրանքով դիմել է հանրապետության հարկային եւ այլ պետական մարմինների, սակայն ստացել բացասական պատասխաններ: Պետեկամուտների կոմիտեից ստացված գրության համաձայն, պահանջվող հարկից բացի նաեւ ուշացման համար տույժեր ու տուգանքներ են սպասվում: Կոմիտեի նախագահի տեղակալի ստորագրությամբ գրությունում նույնիսկ տեղեկացվում է, թե նշված եւ առաջիկա մեկ տարվա ընթացքում նախատեսվող 10 բնակարանների՝ ֆիզիկական անձանցից ձեռք բերման մասով կազմակերպության մոտ կառաջանա եկամտահարկի պարտավորություն, անկախ այն հանգամանքից՝ այդ բնակարանների ձեռք բերման եւ անհատույց օգտագործման տրամադրման ծրագիրը կորակվի բարեգործական, թե՞ ոչ: Թերեւս մեկնաբանությունները ավելորդ են...

Ըստ Վահան Թումասյանի, ուրեմն այստեղ նաեւ օրենքի բացի խնդիրը կա: Եվ այս խնդիրը վերջին հաշվով միայն իրենցը չէ: «Շիրակ կենտրոնը», իր գործունեության 10 տարիների ընթացքում առաջին անգամ օրերս հարկադրված դրամահավաք հայտարարելով (որովհետեւ արդեն տույժերն ու տուգանքները կսկսեն գործել), միաժամանակ խնդրին արմատական լուծում գտնելու խնդրանքով պաշտոնական նամակ է հղել ՀՀ նորանշանակ վարչապետին:

Սկզբունքային հարցն այստեղ, թվում է, այն է՝ պետությունը բարեգործություն կատարողին կխոչընդոտի՞, թե՞ կկանգնի նրա կողքին ու կաջակցի:

# Գերմանիան իսլամացվում է դրսից ու ներսից

*Զանգվածային ներգաղթը՝ դանդաղ գործողության ռումբ*

Պարզվում է՝ պատկանելիությամբ իսլամացնելը լոկ առաջին փուլն է, անհրաժեշտ հիմքի ստեղծումը: Վերլուծաբանները գաղափար անգամ չունեին, որ «իսլամացնողների» ծրագրերում կան ուրիշ մանրամասնություններ, որոնց իրականացումը ենթադրում է ոչ թե մասնակի, այլ ընդհանուր իսլամացում: Այդ իրականացումը սկսվել է առանց աղմկարարության եւ «Ալլահ աքբար» խանդավառ ճիչերի:

Գերմանիայում այժմ խորհում են օտարամուտ արժեքների ու սովորությունների հանդեպ սեփական հանդուրժողականության մասին: Դրանք որեւէ ընդհանուր բան չունեն եվրոպական արժեքների հետ, բայց Եվրոպան ներկայումս հակված է իր համար ստեղծելու համապարփակ խնդիրներ՝ հետագայում դրանք արհաբար հաղթահարելու համար, ուստի ստիպված է հարգել օտարների սովորությունները:



Գերմանիայի օրենքներն արգելում են ամուսնությունն անչափահասի հետ (խիստ վերապահումները նշված են նույն օրենքներում): Բազմակնությունը նույնպես արգելված է: Սակայն արաբական երկրներում, որտեղից զանգվածաբար «գրոհում են» գաղթականները, ընդունված են թե՛ մեկը եւ թե՛ մյուսը:

Ըստ նորմալ տրամաբանության, գաղթականները հյուրեր են: Իսկ հյուրերը պետք է ենթարկվեն անօթեւան ու անհայրենիք մնացած անձանց հյուրընկալող տանտերերի սահմանած նորմերին: Տանտերերը հաճախ, զուտ մարդկայնորեն, հարգում են եկվորների սովորությունները, բայց ոչ բոլորը, այլ լոկ այնպիսիները, որոնք չեն հակասում կայացած եվրոպական արժեքներին: Սակայն եվրոպացիները կա՛մ մոռացել են պաշտպանել իրենց եվրոպական արժեքները, կա՛մ էլ վախենում են դրանք պաշտպանելիս անհանդուրժող կամ անբարեպաշտ երեւալ: Քյոլնի ամանորյա դեպքերի արձագանքը դրա առաջին ապացույցներից մեկն է, բայց ոչ միակը: Ավելի ուշ որոշվեց դպրոցականների ճաշացանկից հանել խոզի մսի թակովի կոտլետները (որպեսզի ծուխը տհաճություն չպատճառի հարգելի հյուրերի հոտոտելիքին, ում Ղուրանը խստիվ արգելում է դիպչել այդ «պիղծ» մսին, արգելվեցին նուդիստական լողափերը... Քիչ է մնում Գերմանիայի կանանց պարտադրեն լողալ հագուստով եւ հիջաբ հագնել:

Եվ սա դեռ սկիզբն է: Եվրոպացիներն այնուամենայնիվ անկայուն էակներ են: Այսօր կհամաձայնվեն աստվածաշնչյան սաղմոսների փոխարեն Ղուրանի սուրահներ ուսուցանել, իսկ վաղը գուցե մտափոխվեն... Քրիստոնյա եվրոպացիների վրա մահմեդականները ճնշում են գործադրում թվաքանակով:

Իտալական El Confudencial կայքը մեջբերում է կանցլեր **Անգելա Մերկելի** խոստովանությունը, ըստ որի ամեն օր Գերմանիա է մուտք գործում 19 հազար եկվոր (չհաշված 2015 թ. ներգաղթի հուժկու ալիքը): Հուսալի հիմք է ստեղծվում երկիրը ներսից նվաճելու համար: Տարբեր երկրների ԶԼՄ-ներում քանիցս նշվել է, որ ներկայիս գաղթականները մեծ մասամբ երիտասարդներ են՝ մինչեւ 30 տարեկան տղամարդիկ եւ 18-ից ցածր տարիքի կանայք: Եվրոպական չափանիշների համաձայն, 15-ամյա աղջնակը դեռահաս է եւ պետք է դպրոց գնա: Իսկ մահմեդականների հասկացողությամբ, նա արդեն միանգամայն պիտանի է սերնդագործության համար:

Վերոհիշյալ իտալական կայքի տեղեկացմամբ, մեկ ամիս առաջ Բավարիայի Բամբերգ քաղաքի դատարանը քննել է մի արաբ տղամարդու եւ Սիրիայից եկած 15-ամյա աղջնակի անօրինական (ըստ գերմանական օրենքների) ամուսնության գործը: Երկար խորհրդածություններից հետո դատարանը ընդունել է, որ «նորապսակներն ամուսնանալիս լիովին հարգել են սիրիական օրենքները, սուննիական ծես կատարել, ուստի ամուսնությունը պետք է ճանաչել օրինական»:

Բավարիայում բացահայտորեն քամահրեցին բավարական օրենքները՝ ի նպաստ գաղթականների երկրի օրենքների: Դատավորների մտքով անգամ չանցավ պաշտպանել եվրոպական (եւ առաջին հերթին գերմանական) արժեքները: Դրանով եկվորներին թույլատրվեց խախտել իրենց հյուրընկալած երկրի կանոնները, եւ գերմանացիներն անձնատուր լինելով՝ օտարներին հանձնեցին քաղաքի (երկրի) բանալիները: REGNUM գործակալության տվյալներով, 2015 թ. մեկ կիսամյակում միայն Բավարիայում արձանագրվել է անչափահաս աղջիկների հետ ամուսնության 550 դեպք (խոսքը բացառապես գաղթականների մասին է): Հյուսիսային Հռենոս-Վեստֆալիա երկրամասում գրանցվել է համանման 188 դեպք: 2015 թ. մեկ կիսամյակում Գերմանիա նոր ներգաղթած մահմեդականների միջեւ գրանցվել է այդ կարգի 3000-3500 ամուսնություն:

Մահմեդականների բազմակնության վերաբերյալ Գերմանիայում պաշտոնական տվյալներ չկան, բայց դա չի նշանակում, թե երկրում բազմակնությունը գոյություն չունի եւ չի ընդլայնվում: Հնդկական ծագումով ոմն ձեռներեց «ճիշտ ժամանակին» ստեղծել է Secondwife.com կայքը, որը մեծ չափով դյուրացնում է «հավելյալ կանանց» որոնումը: Թեեւ մտահղացումը բրիտանական է, բայց համացանցը, ինչպես հայտնի է, սահմաններ չի ճանաչում:

Մահմեդական բնակչության արագ աճը նկատի ունենալով՝ դժվար չէ պատկերացնել Գերմանիայի ապագան: Երկրի արդարադատության նախարար **Հայկո Մաասը** վերջերս «Բիլդ» թերթին տված հարցազրույցում հայտարարեց. «Եկվորներից ոչ մեկն իրավունք չունի մեզ պարտադրելու իր կանոններն ու նորմերը: Այստեղ ամենքը պարտավոր են ենթարկվել տարածքային օրինական իշխանության սահմանած օրենքներին, անկախ նրանից, թե ծնվել են Գերմանիայում, թե՞ եկել են քսան տարի կամ քսան օր առաջ»:

Շատ համոզիչ է հնչում: Սակայն իրականությունն այլ է: Մյունստեր քաղաքի Վեստֆալյան համալսարանի անցկացրած սոցիալական վերջին հետազոտությունը ցույց է տալիս, որ Գերմանիայի ամենամեծ մահմեդական համայնքը կազմող թուրքերի 47 տոկոսն ապրում է իսլամի օրենքներով: Ըստ որում, նոր եկած գաղթականների միջավայրում այդ ցուցանիշը կազմում է 57 տոկոս, իսկ ներգաղթյալների երկրորդ սերնդի միջավայրում՝ 36 տոկոս:

Գերմանիայում ապրող մահմեդականների 90 տոկոսը հայտարարում է, թե իրեն դուր է գալիս այդ երկրում, իսկ 54 տոկոսը վստահ է, որ ինքը երբեք չի դառնա գերմանական հասարակության մասնիկը: Փոխարենը զգացվում է, որ գերմանական հասարակությունը շատ շուտով կդառնա մահմեդականի մի մասը:

Ի դեպ, ներքին իսլամացումը Եվրոպայում արդեն տալիս է իր առաջին պտուղները: Փարիզի 2015 թ. նոյեմբերյան ահաբեկչության կազմակերպիչ Սալեհ Աբդեսլամը մարոկկոյական ծագումով Ֆրանսիայի քաղաքացի է: Նիսում բեռնատարով 84 մարդու սպանած Մոհամմեդ Լահուայեջա Բուհելը թունիսյան ծագումով Ֆրանսիայի քաղաքացի է: Ինն անձանց սպանած մյունխենյան հրաձիգ Ալի Դավիդ Սոնբոլին իրանական ծագումով Գերմանիայի քաղաքացի է: Նրանք բոլորը մահմեդական ներգաղթյալների երկրորդ սերնդի ներկայացուցիչներ են, այսինքն ոչ թե աղերսանքով Եվրոպա մուտք գործած, այլ այնտեղ ծնված եւ քաղաքացիություն ստացած անձինք, որոնք, սակայն, դաստիարակվել են իսլամի օրենքներով եւ ոչ-իսլամական նորմերի ու արժեքների հանդեպ քամահրանքի ոգով: Մահմեդական ընտանիքներում կարողանում են պահպանել նախնիների պատգամները եւ հընթացս տարածել դրանք շրջապատում:

**Պատրաստեց Պ. ՔԵՇԻՇՅԱՆԸ**

# Սիրիայում ամերիկացիներն անցել են B ծրագրին

Մոսկվայից զինադադար պահանջելով՝ ԱՄՆ-ը եւ Թուրքիան պատրաստվում են հարձակվել Ռաքքայի վրա

Սեպտեմբերի 17-ին Դեյր-էզ-Զորի նահանգում սիրիական զորքի վրա ԱՄՆ-ի գլխավորած կոալիցիայի օդային հարվածները դժվար է պատահականություն համարել: Դրանց հետեւանքով սպանվեցին 62 եւ վիրավորվեցին 100-ից ավելի սիրիացի զինծառայողներ, իսկ հակառակորդը կարողացավ անցնել հակահարձակման: Սիրիայի գլխավոր հրամանատարությունը հատուկ հայտարարությամբ ԱՄՆ-ին մեղադրեց Դեյր-էզ-Զորի օդանավակայանի շրջանում «Իսլամական պետության» ջոկատների հարձակմանն օժանդակելու մեջ: Ավելի ուշ Դամասկոսը հաղորդեց, որ ռուսական օդուժի օգնությամբ նախագահ Ասադի զորքերը հետ են գրավել իրենց կորցրած դիրքերը:

Սակայն ամերիկյան կոալիցիայի դավադրական հարվածները կարող են կրկնվել: Սիրիական «Խմեյմիմ» ընդդիմադիր խմբի ներկայացուցիչ **Թարեք Ահմադի** կարծիքով՝ ԱՄՆ-ը եւ իր դաշնակիցները Սիրիայում ունեն աշխարհաքաղաքական նպատակներ, այն է՝ նեղը գցել Ասադին եւ «հսկողության տակ առնել սիրիա-իրաքյան սահմանը»: Այնպես որ, ամերիկացիների նոր հարվածները չեն բացառվում: Իսկ ռազմական փորձագետ **Վլադիմիր Պոպովը** «Նեզավիսիմայա գազետա» թերթին տված հարցազրույցում նշել է, որ ամերիկացիներն ուզում են Դեյր-էզ-Զորի նահանգում է՛լ ավելի թուլացնել պաշտոնական Դամասկոսի դիրքերը, որպեսզի «հնարավորություն ունենան վերահսկելու այնտեղ գտնվող սիրիական խոշորագույն նավթահանքերը»:

Կասկած չկա, որ ԱՄՆ-ը հեռագնա նպատակներ ունի Սիրիայում, Իրաքում եւ ամբողջ Մերձավոր Արեւելքում: Նրա համար Մոսկվայի հետ Սիրիայի վերաբերյալ ձեռք բերված համաձայնությունները սեփական ծրագրի լոկ փոքր մասն են: Կանոնավոր կերպով սողանցքեր են հայտնաբերվում համաձայնությունների խախտման համար:

Սիրիայում պատերազմը շարունակվում է, իսկ ՄԱԿ-ի մարդասիրական օգնության ավտոշարասյուները չեն կարողանում մուտք գործել Հալեպ եւ այլ քաղաքներ: Հենց սեպտեմբերի 19-ին Հալեպի մոտ հարձակման թիրախ դարձավ ՄԱԿ-ի ավտոշարասյունը: Օգնության ծրագրի ձախողման համար ամերիկացիները մեղադրում են Մոսկվային, մինչդեռ իրենք գաղտնի քայլեր են ձեռնարկում:

Սիրիական լրատվամիջոցները ռազմական հետախուզության աղբյուրներ վկայակոչելով հաղորդում են, որ երկրի հյուսիսում՝ թուրքերի գրաված տարածքներում, «ի հայտ են եկել ամերիկյան հատուկ ջոկատներ»: Դրանց խնդիրներից մեկը կարող է լինել թուրքական ուժերի հետ համատեղ հարձակման նախապատրաստումը ԻՊ դիրքերի վրա: Այդ գործողությունները չեն համաձայնեցվում Դամասկոսի կամ Մոսկվայի հետ, բայց հարձակման հավանականությունը մեծ է: Հաղորդվում է, որ «Թուրքիայի տարածքից սահմանը հատել եւ Չոբանբեյի շրջանում բուֆերային գոտի է մտել մեքենայացված շարասյուն», որն ունի առնվազն 25 տանկ, խոշոր տրամաչափի գնդացրով հանդերձավորված շուրջ 50 ավտոմեքենա, ինչպես նաեւ թուրք եւ ամերիկացի զինծառայողներ: Նրանց խնդիրն է «պատրաստ լինել հարձակողական գործողությունների՝ բուֆերային գոտին ընդլայնելու եւ հյուսիսից հարավ, Ռաքքայի ուղղությամբ հնարավոր հարված հասցնելու նպատակով»:

Զինվորական եւ դիվանագիտական շրջանակների լավատեղյակ աղբյուր վկայակոչելով՝ «Ինտերֆաքս-ԱՎՆ» հրատարակությունը հաղորդում է, որ ՌԴ գլխավոր շտաբի պետ, բանակի գեներալ **Վալերի Գերասիմովը** օրերս Անկարայում նշել է Սիրիայում թուրքական բանակի գործողությունների անօրինականությունը: Բացի դրանից, իր պաշտոնակից Խուլուսի Աքարի հետ հանդիպման ժամանակ Գերասիմովը խոսել է «Եփրատի վահան» գործողության երկարաձգման կամ հետագա ընդլայնման դեպքում հնարավոր ռազմական ու քաղաքական վտանգների մասին:

Օդուժի տեղաշարժերին հետեւող կայքերը հաղորդում են, որ սեպտեմբերի 16-ին եւ 17-ին ամերիկյան հետախուզական օդանավերը թռիչքներ են կատարել «Խմեյմիմ» ռուսական ավիաբազայի եւ Թարթուսի նավահանգստի նյութատեխնիկական ապահովման կետի մոտակայքում: Փորձագետների կարծիքով՝ դա արվում է Սիրիայում ՌԴ ռազմական ստորաբաժանումների գործողությունները հնարավորինս կանխելու, ինչպես նաեւ զինադադարի պահպանմանը եւ ԻՊ դեմ հարվածների նախապատրաստմանը հետեւելու նպատակով:

**Պ. Ք.**

AZG NEW SHABAT 1.QXD 22/09/2016 21:28 Page 12



# Եվ կրկին Իսրայելի մասին՝ նախանձով

*Եվ այնուամենայնիվ, ամեն անգամ ապշում ես, երբ խոսք է լինում, առանց չափազանցության, համաշխարհային իրադարձությունների վրա Իսրայելի (հրեաների) ունեցած ազդեցությունների մասին։ Նախանձում ես, որ տարածքով Հայաստանից էլ փոքր այդ պետությունը կարողանում է իր օգտին շրջել այնպիսի իրադարձություններ, որոնք հաճախ հասու չեն անգամ ճանաչված մեծ տերությունների։*

*Օրերս ռուսաստանյան թերթերից մեկը ընդարձակ հարցազրույց էր ունեցել Ռուսաստանում Սիրիայի Արաբական Հանրապետության դեսպան* ***Ռիյադ Հադդադի*** *հետ։ Շոշափված այլ խնդիրների հետ մեկտեղ թղթակցի այն հարցին, թե ինչպիսին է Իսրայելի եւ համաշխարհային սիոնիզմի իրական դերը Սիրիայի ողբերգական իրադարձություններում, եւ կա՞ն հավաստի տվյալներ «Իսլամական պետության», Սիրիայի դեմ մղվող պատերազմում մյուս իսլամական ահաբեկչական խմբավորումների հետ համագործակցության մասին, դեսպանը տալիս է հետեւյալ պատասխանը։*

Օբյեկտիվորեն մենք չենք կարող տարանջատել իսրայելական եւ ամերիկա-ատլանտյան նախագծերը աշխարհաշրջանում. բոլոր ամերիկացի չինովնիկները մրցակցում են Իսրայելին սիրաշահելու մեջ, եւ ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ Ամերիկայի ստրատեգիական սկզբունքներից մեկը Իսրայելի շահերի պաշտպանությունն է, նրա անվտանգության եւ հարեւանների համեմատ ռազմական գերազանցության ապահովումը։ Այստեղ հարկ է նշել, որ «Նոր Մերձավոր Արեւելք» տերմինը ի սկզբանե իսրայելական էր, ոչ թե ամերիկյան, քանզի այն Շիմոն Պերեսի անցյալ դարի 90-ական թվականներին լույս տեսած գրքի վերնագիրն էր։ Ուստի եւ ամերիկյան ստրատեգիան, որն այդ նախագիծը իրականացնում էր նոր հազարամյակի սկզբից, պարզապես դարձավ իսրայելական նախագծի խնամակալը, ինչի նպատակն էր քայքայել մերձավորարեւելյան պետությունների հիմքերը ու նրանց վերակառուցումն այնպես, որ դրանք համապատասխանեն Իսրայելի շահերին։ Բոլոր փաստերը ցույց են տալիս, որ այսպես կոչված «Արաբական գարունը» երկու տերմինների՝ «Կառավարելի քաոսի» եւ «Նոր Մերձավոր Արեւելքի» արհեստական հարկադրական միախառնումն է։ Իսկ այդ «գարնան» պարտադրումն աշխարհաշրջանի պետություններին՝ ծառայում է բացառապես Իսրայելի շահերին։ Եվ հասկանալի է, որ Իսրայելը պաշտպանում է Սիրիայի ոչնչացմանը ներգրավված ահաբեկչական խմբավորումներին։ Բոլոր հեռուստաալիքները ցուցադրեցին, թե սիոնիստական պետության վարչապետն ինչպես է այցելում Իսրայելի հիվանդանոցներում գտնվող վիրավոր ահաբեկիչներին։ Իսրայելական բանակը բազմիցս կրակային աջակցություն է ցույց տվել սիրիական բանակի դիրքերի վրա հարձակվողներին։ Բոլորին է հայտնի, որ Իսրայելի հատուկ ծառայությունների ներկայացուցիչները ներկա են եղել Հորդանանում գտնվող՝ Սիրիայի դեմ դիվերսիոն գործունեություն իրականացնող զինված ահաբեկչական խմբավորումների օպերատիվ կառավարման կենտրոնում։ Եվ երբ ահաբեկիչները գերեվարեցին Իսրայելի կողմից օկուպացված Գոլանի բարձունքներում գտնվող ՄԱԿ-ի խաղաղապահներին, իսկ այնուհետեւ պայմանավորվածություն ձեռք բերվեց նրանց հանձնել պաղեստինա-սիրիա-հորդանանյան եռյակին, ապա դա հնարավոր չէր իրականացնել առանց Իսրայելի հատուկ ծառայությունների հետ կոորդինացման։

Վերջին ժամանակներս Իսրայելի պաշտոնական լրատվամիջոցների կողմից տարածվող բազմաթիվ հայտարարություններն ու մեկնաբանությունները փաստում են, որ սիրիական բանակի հաջողությունը Հալեպում ի չիք են դարձնում ամերիկյան պլանները։ Եվ այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել երեք ամիս առաջ Իսրայելի հատուկ ծառայությունների ղեկավարներից մեկի այն հայտարարությանը, որ «սիրիական բանակի վերջերս ունեցած հաջողությունը վկայում է, որ հնարավոր է մոտակա ժամանակներս վերջ տրվի Իսլամական պետությանը։ Բայց դա չի կարելի թույլ տալ»։ Միեւնույն ժամանակ Սիրիայի դեմ Իսրայելի ագրեսիայի բազմակի գործողությունները ուղեկցվում են ահաբեկիչների ոգեւորությամբ եւ նրանց գործողությունների ակտիվացմամբ։ Օրինակ, Մաարաբի շրջանում տեղակայված տեսախցիկները գրանցել էին Իսրայելի հրթիռահարվածները Սիրիայի վրա դեռ մինչեւ պայմանավորվածության հասնելը։ Ե՛վ պայթյունների առաջին վայրկյանները, ե՛ւ զինված խմբավորումների խանդավառությունը, ե՛ւ Դամասկոսի վրա յոթ ուղղությամբ հարձակվելու փորձերը ցույց են տալիս, որ այդ գործողությունները փոխկապակցված են։ Կան այն բանի բազում օրինակներ, որ Իսրայելը շահագրգռված է Սիրիայում բացասական իրադարձությունների զարգացմամբ եւ դրանցից մեծ օգուտներ է քաղում։

**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

***Հ.Գ.-*** *Բառացիորեն օրերս ԱՄՆ-ի եւ Իսրայելի կառավարությունների միջեւ կնքվեց նոր պայմանագիր, որով ամերիկացիները 2018-2027 թվականներին Իսրայելին ռազմական օգնություն ցույց կտան 40 միլիարդ դոլարի չափով։*

# Էրդողանի Վաթերլոոն

Այս խորագրի տակ լրագրող **Դեյվիդ Լ. Ֆիլիպսը** գրում է, որ սիրիական ճահիճուտում խրվելը, կամ Թուրքիայի մեքենայությունները պաշտպանելը բոլորովին էլ Մ. Նահանգների շահերից չի բխում։ «Եփրատյան վահան» օպերացիան ոտնձգություն է ուղղված Սիրիայի ինքնիշխան պետության դեմ եւ որեւէ պաշտպանություն Թուրքիայի քայլերին հանցագործության մեղսակցություն է նշանակելու։ Հակառակ որ փոխնախագահ Ջո Բայդենը հավանություն տվեց վերոնշյալ օպերացիային, սակայն Ամերիկան զերծ մնաց Ջարաբլուսի վրա ռումբեր տեղացնելուց, նշում է նա։

Թուրքիան շարունակում է ներթափանցել հարավային շրջաններ՝ նպատակ ունենալով սիրիացի փախստականներին այնտեղ բնակեցնել։ Նա ցանկանում է Մ. Նահանգների եւ Ռուսաստանի հետ հավասար իրավունքներով մասնակցել Ժնեւի խաղաղության բանակցություններին։ Իսկ նրա ներկայությունը այնտեղ է՛լ ավելի է բարդացնելու բանակցային գործընթացը։

Օբամայի կառավարությունը զենք է մատակարարում սիրիացի քրդական ուժերին, որոնք ISIS-ի դեմ պայքարող ամենաակտիվ խմբավորումներն են։ Էրդողանը վրդովված է այդ համագործակցությունից եւ այդ խմբավորումներին «ահաբեկիչներ» է որակում։ Նրա ասելով՝ «Եփրատյան վահան» թուրքական օպերացիան ISIS-ի դեմ է պայքարում, որը բացահայտ սուտ է։ Թուրքամետ իսլամիստները երբեք էլ Ջարաբլուսը իրենց մարտական ծրագրերում չեն ընդգրկել։ Նախքան Ջարաբլուս ներխուժելը Թուրքիան համաձայնություն էր կնքել «Իսլամական պետության» հետ, համոզելով որ փոխանակ իր քայլերին դեմ լինելու, պարզապես նրանց մարտնչողները փոխեն իրենց համազգեստը եւ կրեն «Սիրիական ազատ բանակի» (FSA) համազգեստ։ Ջարաբլուսը «ազատագրվեց» ISIS-ից՝ համարյա առանց կրակոցների։ Ֆելուջայի եւ այլ վայրերի մարտերին հակառակ, քաղաքացիներին տարհանել էին Ջարաբլուսից, որպեսզի ISIS-ի ծպտյալ զինվորներին ճանաչողներ չլինեն։

Բոլորովին զարմանալի չէ, որ Էրդողանի կուսակցությունն ու ISIS-ը համաձայնության եկան։ Նրանք գաղափարակիցներ, համախոհներ են։ Երկուսն էլ «Մահմեդական եղբայրներ» ծայրահեղ խմբավորման ճյուղերն են։ Հակառակ պաշտոնական հերքումներին, բազմաթիվ փաստեր կան, որ Թուրքիան փողով, զենքով եւ տեղեկություններով օգնում է իսլամիստներին։ Դեռեւս ամեն ամիս մոտ 500 իսլամիստ մարտնչող է Թուրքիայից անցնում Սիրիա։

Թուրքիան փորձում է խոչընդոտել, որ քրդական Ռոջովան իրականություն դառնա, վախենալով, որ դրա գոյությունը կներշնչի Թուրքիայում ապրող քրդերին ինքնավարության պահանջներ ներկայացնել։ Քրդերի հանդեպ ունեցած Էրդողանի թշնամանքը գաղտնիք չէ։ Սկզբից էլ պարզ էր, որ ISIS-ին թողնելով Թուրքիան, ի վերջո, զբաղվելու էր քրդերի հարցով։ Շատ հավանական է, որ Օբամայի վարչակազմը տեղյակ էր կատարվածից։ Պենտագոնի ավագ ներկայացուցիչներից մեկը CNN-ի լրագրողին հայտնել էր, որ «Թուրքերը երբեք էլ Ջարաբլուսով չէին հետաքրքրվել, մինչեւ քրդերը ցանկություն չհայտնեցին այն վերցնել իրենց ձեռքը»։

Ամերիկայի հարաբերությունները Թուրքիայի հետ արդեն լավ չէին։ Այժմ, երբ Թուրքիան Ամերիկայի դաշնակիցներին է հարվածում Սիրիայում, այդ հարաբերություններն է՛լ ավելի են սրվում։

Օբաման պարտավոր է շրջահայաց լինել։ Սիրիան Էրդողանի Վաթերլոոն է լինելու։ Ամերիկայի կառավարությունը չպետք է շղթայված լինի Թուրքիայի ընկղմվող նավին, եզրակացնում է Դեյվիդ Լ. Ֆիլիպսը։

**Պատրաստեց՝ Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆԸ**

# ՎիվաՍել-ՄՏՍ-ը՝ Հայաստանի անկախության 25-րդ տարեդարձին նվիրված ցուցադրության գլխավոր գործընկեր

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը, Հայաստանի Հանրապետության անկախության 25-րդ տարեդարձի կապակցությամբ, ներկայացրել է «Եղեռնից դեպի անկախություն վերականգնում» խորագրով ժամանակավոր ցուցադրությունը, որում ներառվել են 18-20-րդ դարերի հայ ազատագրական պայքարի տարիներին պատրաստված պատմական հազվագյուտ դրոշներ ու զինանշանային հորինվածքներ։ Բացառիկ նմուշներ են Մեծ Եղեռնից հետո հայ որբերի պատրաստած դրոշներն ու զինանշանները։



Հայաստանի եւ Սփյուռքի մի շարք թանգարաններից ներկայացված ցուցանմուշների մեծ մասը ցուցադրվել է առաջին անգամ։ Հայկական զինանշանների ու դրոշների պատկերագրության հազվագյուտ նմուշների թվում են գործեր, փորագրանկարներ, պաստառներ, արծաթե իրեր, նամականիշեր, բացիկներ, գրքեր ու ալբոմներ, ինչպես նաեւ «Մայր Հայաստան»-ի կերպարով տարբեր հորինվածքներ։

Ցուցադրությունը, ներկա սերունդի համար ուսուցողական ու դաստիարակչական նշանակությանը զուգահեռ, համազգային ակնածանքի ու հարգանքի դրսեւորման յուրատեսակ ուղերձ է գերագույն արժեքի՝ անկախ պետականության եւ դրա խորհրդանշանների հանդեպ։

Ցուցադրության մեջ ներառվել են ՀՑԹԻ-ի, ՀՅԴ Բյուրոյի թանգարանի, Լոս Անջելեսի «Արարատ Էսքիճեան» թանգարանի, Բոստոնի Հայկական թանգարանի, Հայաստանի ազգային արխիվի, Կարեն Յեփեյի հուշ-թանգարանի, Դանիա, Բոստոնի Հայկական ազգային հետազոտությունների ընկերակցության Ռումինիայի հայոց թեմի թանգարանի նմուշները։

Ցուցադրության գլխավոր գործընկերն է ՎիվաՍել-ՄՏՍ-ը։

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԵ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի։
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում։
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում։

"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47։ Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 25.02.00 թ.։
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան։ Ստորագրուած է տպագրութեան 22.9.2016, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2։